

August 19

JK

491.99-8  
9-55

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ

обозначенного здесь срока

~~491. 542-82~~  
~~9-55~~

Դաշնայ - Կովկասի քաղաք

~~428~~  
~~178-21~~

## ԴԱՍԸՆԿԵՐ

491. 99-8

Ա. Տ. Պ. Ի.

9-55

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ-ԲՆԹԵՐՑԱՐԱՆ

Կովկասի գրադարան

Ը

Կ Ա Զ Մ Ե Ց Ւ

ԱՐՃԱԿ ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ, ՏԻԳՐԱՆ ՌԱԶՄԱՎԵԱՆ

ԵԿ

Ա Կ Ե Տ Ի Ք Ի Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն






Խնդրություն, փոխադրած յօդաճների եւ նկարների արտատպութեան  
երաւունքը վերապահած է

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ ԲԱՐԵՓՈԽԻԱԾ

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Ելեմեր. ապ. օր. Ն. Աղանեանի. պոլից. 7.  
1911

17.07.2013



կ և ւ ս ն ւ լ ժ ը





Արքիկը գրում է



Պապը թռնիկի հետ խաղում է




Պատերի վրայ նկարած է սար

III

Ա

պար պ  
ա պա, պա պա.

Ա Ա Ա  
ա ա ա,  
ա ա ա ա.



Սարը ծածկւած է ձիւնով



Տատը կարում է



Ժամանակը ձու ունի

սար բ

պար, պա պար,  
պար, պա պար.

լուս լու

լու լու, լու.

լուս, լու

պար պար.

ի


պարի, պարի  
լոի լոի լո րու.

լու լոի, լու լու պար.



Արքեկը գրում է մատիտով

Յա Յա, Յա Յի, արաթ սա պա պա



Իսահակի ձուն կարմիր է

Յա Յիտիտ Յ

Կար Յիր Կ

Կար, Կար

Յա Յա Կար Կարիր.



Հիպարիտը այծին խոտ է տալիս


IV

Ե պարիր Ե

Ե լա, Ե լիկ.

Արաթ, Արի


Ե լիկ տաթ, տար տա տիւ.



Հիպարիտի ուլը խոտ չի ուտում

ուլ ու  
տա տիւ, տա

ու լիկ ու լիկ պու լու լիկ,  
կար Յիր կար Յիր ու լու լիկ.



Նու Նիկ Ն  
Նա Նի,

Յի Նա Յուկ  
տուր.

Նունիկը և Վանին գնում են ուսումնարան

պար պար սի ռուն պար,  
տա տիկ, արի լու սի կին տար.



Վանին բռնել է նունիկի ձեռքը

Նա տարաւ կարմիր կաւ.

վանի

վ

վանին

լու

վար

արաւ

վար րիր, վար րիր ի՞մ մաւ  
այ րիս, վար րիր ի՞մ սի ռուն.  
վար տուր ար տու, ի՞մ մաւ



Էմինը կոտրում է ընկոյզ


է սին է

է սին, էս

էնսէն է

կա լրուն մու կին ա սաւ,  
սի ռուն մու կիկ, պար արի.  
վանին է սի կին տուն տաւ

Վ



Եմինի ընկուղը մհծ է

ընկաւ, ընտիր,  
ընտանի, ընտրիր  
սուրենը պարում էր.

Նա վար ընկաւ լուսի կը տարաւ  
սուրենին մի մաս տիխու ու աւ.

Եւ աւ եւ


երանը

երկու

երկար


պարան

ունի



Եւան պարտեզի մէջ գարդ է քաղուս

Եւ և արձիք սև սև ամսպերի  
առանձնութեաւ.



Վ

վարսիկի կատուն.

վարսիկը ուներ

մի սև կատու.

լաւ կերակրում

էր, սիրում էր


ընկերի սէս,

նանիկ էր ասում, պարապար անում.

վարսիկի սև սիրունիկը սատկաւ.

նա լայիս էր ու ասում ուր է իսում

սիրունիկը, ուր.



Եւայի պարտէզը սիրուն է

պար տէն

Կ

զա լէն,

ասա

զա նա զան.

արե արե, եկ եկ,

զիսի սարին վեր եկ.


զիսի սարը, տնս, տնս,

արլարլում է լուսի սիս



Օնիկը և Գուրգչնը օղակ են խաղում

օնիկ օ



օրօր, օրօր, իմ լալաս,  
երկար օրեր ունենաս.


օրօր, օրօր, արեիկ,

նանի, նանի, սիրունիկ.

գուրդէն գ


գաղիկի լաւ գոտին

գաղուկէն է



Քուբքէնի օղակը փայտից է

գիտունին դերի մի լինի,  
անդէնին սիրելի մի լինի.



Սա օնկեց ոտն է



սրտուն դորտը.

1) Մի դորտ ընկնում

է անի տակ և վնասում է  
ընկեր դորտերը վրա են վայրում,  
ուզում են օգնել և ասում են. Էն  
անի ին պիտի մի լաւ առրորդէ  
կոռ կոռ անել.

2) զուր է ասում է տկար դորտը.

ոտ ո

ուկանը ոտում է

ոստ տափաս.

Ես ին անի ին ինպէս զարկի, ինպէս  
զարկի, որ սիրուր մարաւ.

դանակ ո

դանդան մանկիկ


դանդանա,

դանդան կատու,

որ նանա.



Մայթիկը դանակով հաց է կարում



իմաստուն կովը  
անկարդ վարդդէսը  
ամուր զարկում է


կովին, կովը ուզում է նրան սաստի,

մրա է վասում, դնում է վարդղեսին  
պուտիրի մրա, տանում, տայիս է  
մօքը մանուկը նոր է սկսում լալ.




Թորոսը խփում է շանը

թոն արաւ, թարաւ արաւ.  
գարու արտը լաւ արաւ



Ցողակն ու Բաբկենը ձի-ձի են խաղում

1002  
8852



թորոս թ  
թաղիկը ունի թուզ  
եւ ան պետքոսին  
ասում է, արի թան  
տար տանին.

ցողակ ց  
ցեց, ցաւ,  
րաւ.

ցողակի ակնոյք.

ցողակն ասում է պապա, ասում  
եւ ակնոյք լաւ են տեսնում.  
սիրելի պապա, տուր ակնոյք,  
տեսնեմ մաման ուր է դրել  
մուրասան ու միրդը.



Բարեկէնը վար է ընկել

բարեկէն բ

բռշ բռշ, բռշբռշան,  
բյէնեկաւ տրկորզան.

Ես ունիս թէկ բերան,

թէկ բերան, ոսկի բերան.

Նրանով պատմում եմ,


զրեր կապում, կարդում եմ,

լու բաներ ասում եմ.



Այ, այ, ևս վար ընկայ, ասում է Բարեկէնը

Ես վար ընկա, ասում է բարեկէնը  
այսօր բորբոք զնաց պարտէն.



Օ՛, քեթո ցաւում է, ասում է Բարեկէնը

այ, այ

այս, այդ.

այ, այ,

մայրիկ,

բարեկէնը

այսօր բորբոք զնաց պարտէն.

ֆիր ֆ


ֆիր, ֆիրի,

ֆորու, աֆոր.

ֆիր ցաւում


է, ասում է

բարեկնը. Բայրը վաստից օգնեց նրան.



Հազարի եղներն ու ռժիարները արածում են

սուրբն զնային բազար. Նրանից  
գնեցին բուք ու դամբուլ.



Ճաշիկը ուտում է խաղաղ

շուշիկ ո  
միշ, շուն, շուշան.



կատուն և սերը.  
սեղանի վրա Թի  
աման սեր կար.  
կատուն զատ  
անօթի Երամանի

բերանը նեղ Եր, ունել անկարելի  
Եր. ամանը վայր զայեր, Յենի կիմայ-  
ւեր. կատուն մոմունց և եւեր  
զուտ նա բարիկը մոպեց ամանը  
և լիսեց. այսպէս զատ անգամ  
արաւ սերից մաս Թի խնի  
կարիլ կատուն կրտացաւ, զնայ.

աւեր եռ տևաւ ամանը դատարկ  
պարմաց.



Շուշիկի խաղողը հասած է

դանէլ, զնա ու խաղող բեր. այսօր  
պարիկը պատրաստել է քանի սպա.

զամիկ կ

վերու զամիկը  
պարագ են.



Զամիկը չորացած խաղող է

խաղող ի

խոն, խաս, խուլ

շուշիկի ու խաղողը  
խոչը է խորէն, խակ  
սեխ մի ուտիր, վնաս է

դանէլ, զնա ու խաղող բեր. այսօր  
պարիկը պատրաստել է քանի սպա.

միկը զալիս է մօլլի Յօն և ասութէ  
մօլլա, այս կտորը ներկիր այնպէս, որ

ու ու լինի, ու կարմիր, ու դեղին,

ու կանաչ և ու կապուտքաւ, ասութէ

է Յօլլան. Եռ զամ տանեմ»-արի

այնպիսի օր, որ լինի ու երկուշարքի,

ու երեքշարքի, ու չորեքշարքի, մի

խօսքով շարարտա ու մի օրը

զուր զ

զալալ, այսօր

զրամանով


զրիր պարտէսը.



Զալալը ջրում է հորթին

զատ տայ զրով մի զրիր, կանաչները

կը վնասւեն քաղոս, զնաւ տես,  
բռւտիլ են խէսօհ և դաշարի սորենի  
արտեր.



Զալալի հորթը սերուն է

հորով խաղ անելիս ոտք կորեց  
հորով զնաց շինող դարձնի մօտ  
և ասաց « ոօ, տնաւեր, որ դիստիր  
յո Թանգաղի հունարը կորելն է, է  
ինչո՞ւ տիիր. »



Ճանճը թռչում է

տես Եռաւն այն իսպողոր ուսում է

ավլոր

Ֆի, ֆի,  
ավլորամի.

ավլոր զնաց երևան

բուրդ բորդ,

բամբակ բորդ,

զալ արաւ,

զալար զարաւ.

հօս, երնեղիկ,

պասոնց երդիկ.

# Ժանիկ Ճ

Ժիտը եղւը ում է.

Ճիւ, Ճիւ, Ճիւ

Ժիտիկ եմ, Ժիտիտիկ եմ,  
Յօր բերած եմ, հօր պահած եմ,  
ապիկ նանի խաղըրած եմ.

բոյս ոյ

պարոյր, զոյք  
տուր, որ Ճա-  
ղիկն է մանու-  
ղակ-այ, սա է

մանուղակն ինչ զոյն ունի.


մանուղակը կապոյտ զոյն ունի.

1) Ծաղիկը բռյա է

2) Մանուշակը բռյա է



Աստիճանակի գրայ կայ մի  
փունջ ծաղիկ



1) Ծաղիկը բռյա է

2) Մանուշակը բռյա է

# Ժոյլ թեւանը



թեւան, դնա, կալսիր

-օ, գլուխ զաւում է

թեւան, եկ մանուն  
կեր

-ո՞ր է իս մթեն

գդալը



Ժամացոյցը ցոյց է տալիս ժամը ութը


# Ժամացոյց Ճ

արզը և ժօրժիկը.  
որք ժօրժիկը դուք-  
սընէր միացի.

Կա յրտիկ դողում էր, ժաժ զաւ  
կեր կարող ինեղեին օգնող վկար,  
Թի զութ տեսաւ, ներս մոտաւ այն-

տեղ մի արզ կար նստած նա երե-  
 խին գրեթե, ուսխարեց. Ճօժիկը  
 յերեկը զնում էր Թուրալու, զիւռը  
 զայիս էր, արզի հետ ուրախ զարք-  
 նում էր. Մի օր տէրը տեսաւ երե-  
 խին արզի զրկում. խղճայ, վերը-  
 բեց Ճօժիկին, իր Թօն պահեց.

կռունկներ և  
 կռ կռ կռուկռան  
 կռունկները հարուն.  
 կռունկների թեխ ուսկ  
 եկաւ ամառն Թիր զռան.



Կռունկները կանգնած են

«բարի լոյս, զարօ զան»  
 -այ բարին արևոն, ժնի խէց.  
 «ինչպէս ես, լաւ ես»  
 -շնորհակալ եմ. բայց ի՞մ անու-  
 նը զարօ չէ  
 «ի՞ն էլ խէց չէ»



Խելօք Փիսիկը նստած է

Փիսիկ Փ  
 Միօ, Միօ, միհլո միհլո.  
 ով կատուն ես,  
 աղարեղի.  
 ինչ ես ուզում.  
 Վիրու ուզումիւ.

-ութեստանում

իմ փոքրերին.

-որ զողանաս,

կը տամ գլխիդ,

իիհլուն, կորի.

—  
յառակ յ

յակորը յոզնած է. յունիս, յուլիս  
ամիսներ են. եկայ, միերեխայ տեսայ.

սուիկ յակորը

փոքրիկ յակորը վար տղայ էր. մի  
օր յասմիկ քողը ծեժեց, ինչն էլ


վայր ընկաւ յատակին և ճակա-  
տը պատուի.

յակոր ճակատը Եղ ինչ ես արել.

«Մայրիկ, կժեսի».

— ո՞ու յո ճակատը ինչպէս կժեսիր.

«աբորի վրայ ելայ և կժեսի».




Սեղանի վրայ պլած է ամանով ձու.



շու շ  
շուկ, շի, շեկ  
շլո, շլոն  
երկու շի.

չմթն երեկոն չի զնացին զուր խմթելու  
 դեւր սառած եր. մթկ մթկ փորձեցին  
 վկարողաց սառոյցը զարդել ճա-  
 րակի բուլացել էին նրանք մուածե-  
 ցին, հնարք զտան. երկուսով մթկ  
 տեղ սառոյցին խփեցին, կուրքեցին,  
 կուլու զուր խմթեցին.



Փայտօն Փ  
 Փլորան  
 Պնումթ  
 Փայտօնով

Առնու Փարք վի ուզում Փուրգօն  
 Նստել

Ա, Բ, Գ, Դ, Ե, Վ, Ռ, Ժ, Ի, Հ, Լ, Խ,  
 Ձ, Կ, Խ, Յ, Շ, Ճ, Ջ, Ն, Ղ, Ռ, Կ, Ա,  
 Չ, Ա, Ո, Ւ, Ա, Բ, Կ, Ի, Ժ, Լ, Օ, Ժ

## VII

Տպագիր փոքրաստառեր

Ա ա թ ի ե

Ա պ պ թ մ

Ա ս ս կ կ

Թ թ թ լ

Ա ա ու ու



Կու կու լի կու,  
 պստիկ-մստիկ,  
 կարմիր կատար,  
 արի, արի,  
 կուտիկ տար:

բգեզ

բըզ-բըզ, բըզբըզան,  
բգեզն եկաւ տըզտըզան.  
եկաւ, ընկաւ թակարդը,  
նրան բոնեց մեծ սարդը:



բօրը

1.—ազատեցէք, իմ որդուն կրակի բոցերից, լալով  
կանչում էր մայրը.

—ազատեցէք իմ եղբօրը, գոչում էր քոյրը և լա-  
խիս. յանկարծ մայրը դիմում է շանը և ասում է.  
—բօր գնա, բեր թագուշին.

2. շունը վազում մտնում է այրող տունը, թա-  
գուշին ազատում, բերում տալիս է մօրը. բոլորը գո-  
վում են բօրին. անվախ շունը նորից վազում, մտնում  
է կրակը. այս անգամ դուրս է գալիս բերանին մի  
տիկնիկ։

Ա	ն
Ո	՛
Ե	՛
Ը	՛
Ւ	՛
Ի	՛
Ռ	՛
Ւ	՛
Ռ	՛
Շ	՛
Շ	՛
Ո	՛

### վարդանը և ոսկանը

վարդանը գետի մօտ  
ման էր գալիս, մէկ էլ գը-  
լորւում, ընկնում է գետը.  
վա, վա, ես կորա, ես կո-  
րա, ասում է մանուկը.  
ոսկանը լսում, վազում  
տեսնում է վարդանին գե-  
տում և ազատում է։

Բ	Բ
Բ	Բ
Կ	Հ
Կ	Հ
Մ	Խ
Մ	Խ
Ջ	Ջ
Ջ	Ջ
Շ	Շ
Շ	Շ
Ո	Ո
Ո	Ո

բարկէնի մայրիկը քա-  
ղաքից բերեց քանոն, քա-  
ցախ, թութ, չիր ու չա-  
միչ, շաքար ու նուշ։

թ

ջու ջու, ջու ջու, իմ հաւիկներ,

հ

ճերմակ ճուտեր, հաւմարիկներ,

թ

դուք ճշտճրտան սիրուն ճտեր,

ժ

եկէք, կերէք, ձեր հատիկներ.

ժ

ժիր ծովինար, անուշ ժօրժիկ

ժ

հայկակ, ծերուն, խորէն, ծաղիկ,



### Մատների վեճը

**Ճկութ** — այ բուրիկներ,  
ջան քուրիկներ,  
ես քաղցած եմ,  
հաց եմ ուզում.

**մատանու մատ** — որ հաց չունենք,  
մրտեղից գտնենք.

**միջին մատ** — աստւած կը տայ,  
մենք էլ կուտենք.

**ցուցամատ** — եթէ շտայ,  
ինչպէս ճարենք.

**բութ** — գողնանք կուտենք.

հէնց որ բութն այսպէս ասաց,  
բոլոր քուրերը մէկ տեղ հաւաքւած,  
վրա տեսցին, բութին ծեծեցին,  
այնպէս ծեծեցին, որ այն օրից դէս  
խեղճ բութը մնաց կարճ ու սև երես:

իւ իւ

ու ու

ոյ ոյ

չ չ

ժ ժ

ֆ ֆ

փ փ

գիւղացին հարիւր մանէթի  
իւղ ու ալիւր ծախեց.

յակոըը, յասմիկը, պա-  
րոյրը ծուլութիւն ու չա-  
րութիւն են անում. նրանք  
ձմեռը փողոցում ձնէ մարդ  
են շինում փափուկ ձնից  
և ձնագնդով խփում.

քաղաքում ձիերի ու-  
նաձայնը, ֆուրգօնների ու  
ֆայտօնների գրգոռցը ա-  
կանջ են խլացնում:

### պատիկ հեքեաթ

հէքեաթ, հէքեաթ պապս,  
նաշխուն քուռակ տակս,  
հեծնեմ երթամ երևան,  
գինի խմեմ գիրանամ,  
հաւերիս չալթուկ բերեմ,  
հաւերս ինձ հաւկիթ տան.  
հաւկիթը տանեմ խառատին տամ,  
խառատը ինձ շւի տայ,  
շւին տանեմ հովւին տամ,

հովիւն ինձ գառ տայ,  
գառը տանեմ աստծուն տամ,  
աստւած ինձ աղբէր տայ.  
աղբէր, աղբէր, ջան աղբէր,  
շաքար մաղեմ, կեր աղբէր:

V|||

Զեռագիր և ապագիր մեծասառեր

Ա Ա ս Ս Սօսի, Արամ, Տիրան, Պետօ

Ա Ա ս Ա Ասոի, Իրամ, Այետօ, Էլիիրան  
շուապութ են ուսումնարան:

Ա Ա պ Պ զիրք



Ասա տեսնեմ,  
իմ սիրուն գիրք,  
մատաղ կանեմ  
քեզ խաղ ու միրգ.

Էս Բնչեր կան  
ծոցիդ մէջը.  
ճստան մուկը,  
ոսկի ձուկը,

թիթեռ, բզէզ,  
իսկ ծաղկի պէս.  
բաղն ու պուլիկ,  
գառն ու ուկիկ,  
կաքաւ ու լոր  
շլոր, սալոր:

Ասա, պատմիր  
իմ ականջից,  
դու շատ գիտես  
Ամեն ինչից.

Դէհ, շուտ պատմիր,  
իմ խելօք գիրք,  
մատաղ կանեմ  
քեզ խաղ ու միրգ:

Ա Ա ս Ա Թուբէն

Օ Օ օ Օ Օնիկ, Օսան,  
Վ Վ ս Վ Ոսկան

Օսանը Թուբէնի և Ոսկանի խյորն է:

### Թուզանը

— Օգնեցէք, օգնեցէք, կանչում էր փոսի մէջըն-  
կած կոյր Սահակը, օգնեցէք և ինձ ազատեցէք:  
Ոչ ոք ուշը չէր դարձնում: Սահակի ձայնը լսում  
է փոքրիկ Թուզանը, վազում, կանչում է հայրիկին:

ր Ռ ր Ր

Րաֆֆի

բ Բ բ Բ

Բաբկէն, Բագրատ

զ Ջ զ Ջ

Քասախ, Քանաքեռ

Արտուրիկ

Այ արտուրիկ.

Արշալուսին

Այուտյուտուրիկ, Դովիներին

Թոփրիկ թովնիկ, Բարի լոյս ես  
Կարմրատուրիկ. Ճըւըլում,

Աիրուն հանդում,

Կանակ դաշտում

Արխակի տեղ

Երդ ասում:



Կորիկ, Թմբլիկ,  
Հասակս է պստիկ,  
Աչքերս են գեղեցիկ,

Այտերս են խնձորիկ,  
Բերանս է անուշիկ,

Ո՞վ կայ ինձ պէս սիրունիկ:

ի Ւ ի Ւ

Իսահակ, Իշխան

ի Ւ ի Ւ

Խաչիկ, Խորէն

է Ե է Ե

Էմին, Էմիլ

Խահիկ, Խաֆֆի, Դմին, Խակիկ

### Բկիկ Պետիկը



Պետիկը բկիկ էր: Ինչ տեսնում ուտում էր. մէկ օր երբ մայրը գործի էր, Պետիկը ծածուկ մտաւ պարտէզ և բարձրացաւ փոքրիկ սալորենու վրայ: Պետիկըն այնքան կերաւ, այնքան կերաւ խակ սալոր, որ փորը ցաւեց:

Պետիկը լաց եղաւ. մայրը վրայ հասաւ, ամեն բան հասկացաւ և բկիկին դեղեր տւեց: Պետիկը մի բանի օր հիւանդ պառկեց:

ժ Ժ

Ժ Ժ

Ժօրժիկ

ժ Ժ

Ժ Ժ

Ծովինար

թ Թ

Թ Թ

Թորոս, Թաղոս

Ճօրժիկը պարու՞մ է, Շովինարն ու  
թորոսը ծափ են տալիս:

Էն բնչն է

Թէ խօսես, կը խօսի.  
Եթէ թողնես, կը քնի.  
Թէկուզ ինչ էլ որ լինի,  
նա յաւիտեան չի մեռնի:



### Մատների խաղը

բութ	—Այ, այ, գայլն եկաւ.
ցուցամատ	—Ո՞րտեղից եկաւ.
միջին մատ	—Տես, տես, սարից եկաւ.
մատանու մատ	—Փախչենք երթանք.
ճկութ	—Վայ, վայ, Պստլիկ եմ, Հստլիկ եմ, Հուստեր չունեմ, Ի՞նչպէս փախչեմ:


Են են են եւա, երևան  
Նն նն նազիկ, նունէ  
Ին ին չայկ, չըանտ

Նոյեմբերին  
Նոյեմբերին ցուրտ հիւսիսից  
Քամին փկեց զու արաւ,  
Թերեւները բուփ ու ծառից  
Այոկեց, վշեց ու տարաւ:

Նեռու երկրից ներուկ պապին  
Նրէս կրգայ շտապով,  
Կուրտը շալկած, բուքը բերնին,  
Ախտակ սաւան փռելով:

Էն բնչն է

Հանելուկ, հանմանելուկ,  
Ծէրը ծաղիկ, տակն աւելուկ:



### Ծոյլ Խաչիկը

1. —Խաչիկ, ժամանակ է, ուսումնարան գնա:  
—Օ՛, դեռ վաղ է:
- Խաչիկ, դաստ սովորիր:  
—Օ՛, գլուխս ցաւում է:
- Խաչիկ, եկ հաց կեր.  
—մայրիկ, խաղող էլ կը տան:
2. Խաչիկը մի օր էլ գիրքը բաց արաւ, ծառի տակ  
նստեց և վրան նայեց: Նայեց, նայեց՝ ոչինչ չոռ-  
վորեց.—Խաչիկի քունը տարաւ:
3. Որտեղից որտեղ մի փոքրիկ այծ մօտեցաւ նրան,  
պոզերով խփեց, որ զարթեցնէ և հետը խաղայ:  
Քնած Խաչիկը վախից վեր թռաւ, գոռալով տուն  
վազեց:—Տեսար, Խաչիկ, այծն էլ քեզ պատժեց,  
ասաց մայրիկը:

Ճ Ճ Ճ Ճ

Ճանիկ, Ճորոխ

Ջ Ջ Ճ Ճ

Ճօնիկ, Ճորագեղ

Զմեո Է: Ճանապարհները չիւնով ժամկւել են:



### Կաղիկ տատի խաղը

Ծափին ծափին ծիլծիլա,  
Ելէք տեսէք, ով կը գայ:  
Անուշ բալէս տուն կը գայ:  
մեծ թոնիրը վառեցէք,  
կարմիր արլոր մորթեցէք:  
Թոփը, թոփը, թոցնեմ,  
Աքլորի միս կերցնեմ,  
Ծառի հովին քնցնեմ,  
Հօրդ թևին հասցնեմ:

Ւ Չ Չ Չ

Չամչեան

Ւ Չ Չ Չ

Չաբէլ

Չար Չարիկը լալիս է:

Չիկ, չիկ, ճիկ, ճիկ,  
կարմրաթշիկ  
Սիրուն վաչիկ,  
Տնւր ինձ պաչիկ:

# Աշուն

1

Աշուն է, նաշխուն է:

—Հայրիկ, այսօր ես ու Ձօնիկը գնացինք այգի. այնտեղ հանգիստ ու դադար չկար. այգեպանը ուրախ ուրախ քաղում էր սիրուն հոտոտ խնձորներ, կարմրաթշիկ դեղձեր, դեղին, փափուկ տանձեր, շլոր, ունապ, ընկոյզ և շատ տեսակ պտուղներ: Ալւան ալւան խաղողները մարդու խելք էին տանում. մենք շատ կերանք, քաղեցինք, շատ ման եկանք, ուրախացանք:

—Ափսոս, հայրիկ, որ օրերը հիմա կարճ են, ամառայ նման երկար չեն:

—Այս, Հրանտ, այգիները գեղեցիկ են աշնանք. վաղն էլ գնանք բոստանները, նոր նոր բաներ կը տեսնենք:

2.

—Այս, այս, ձմերուկ, սեխ, վարունկ, շամամ... որչափ շատ են գետնի վրայ տարածւած. հայրիկ, տես թէ ինչպէս հոտաւէտ է այս նաշխտիկ շամամը, իսկ այս սեխը, դեղին դուդման, սիրուն կանաչ վարունկները, որ մէկն ասեմ: Այժմ մտնենք բանջարանոց, ասաց հայրը:

—Հրանտ, տես, տես, որչափ կաղամք, գաղար, տակ, բողկ են ցանած այս մարգերում. կարտօֆիլն էլ հաւաքում են. հայրիկ, այսպէս արագ ուր են տանում:

—Քանի եղանակը զով է, պէտք է տանեն, ծախեն, որ ցրտերը չվնասեն, ասաց հայրը:

Տեսէք, ինչպէս թոշուններից շատ շատերը շար-

ւէշարան մեր աշխարհից գնում են, տաք երկրներ թոշում են:

3.


—Ափսոս, հայրիկ, հաղար ափսոս, որ առաջւայ ուրախ կեանքը էլ չկայ. այժմ անտառ, այգի, արօտ զարդարանքից զրկւել են, տերևները դեղնել, այս ու այն կողմ են թափւել:

—Այս, որդիս, աշնան վերջին միշտ այդպէս է լինում. մի քիչ յետոյ սառը քամի կը փչի, կենդանութիւն էլ չի լինի դաշտումը:


Աշուն է, տխուր է, ձմեռուայ գալու նշան է:

# Աշուն


Արի, աշուն,	մեծ մեծ տանձեր,
Արի, նաշխուն,	Խնձոր ու նուշ,
Արի ու բեր	մրգեր անուշ.
շատ բարիքներ,	Արի, աշուն,
Հասած դեղձեր,	Արի, նաշխուն:



Լոռն, Լուսիկ



Բնձակ



Շուշիկ, Շողիկ

Հեռնը, Շուշիկը և Ծնչակը խաղութ են:

Լուսին, լուսին,  
Լուսերես,  
Ի՞նչքան, ինչքան  
կը ես:

Լուս ես տալիս  
գիշերով,  
Քո վառվոռն  
թշերով:

Ա Վ Վ

Վարդան, Վահան

Ղ Ղ Ղ

Ղուկաս, Ղևոնդ

Չ Չ Չ

Չալալ, Չաւօ

Վահանը, Դևոնդը և զաւօն կարդում են:



## Վարեակ

1.

— Ծիւ, ծիւ, ծիւ...

— Օգնեցէք, քոյրիկներ, օգնեցէք որբուկիս, մայրիկներ:

— Ի՞նչ է պատահել, սարեակիկ,  
Ո՞րտեղից եկար, ծիտիկ,  
Ի՞նչ է քո ցաւը, անուշիկ,  
Շուտ ասա, փոքրիկ թուչնիկ.  
հարցրին ամեն կողմից թոշունները սարեակին:

2.

— Առաւօտեան մայրիկը մեղ համար անուշ անուշ  
երգում էր. մէկ էլ յանկարծ բօմք... մենք շատ վախեցանք. մայրիկի վրայ կրակ թափւեց, նա գետին  
գլորւեց: Են չար մարդը մայրիկին տարաւ.

— մայրիկն ասում էր.— Աշուն է, տաք երկիրներ  
պէտք է թոշենք, նոր աշխարհներ պէտք է գնանք.  
— մենք մենակ ենք և չգիտենք ինչ անենք: Օգնեցէք  
մեղ, քոյրիկներ, օգնեցէք մեղ, մայրիկներ...

3.

Ծիկ, ծիկ, ծիկ. պիկ, պիկ,

Զար որսորդն է այդ արել.  
Որբուկներին պէտք է օգնել,  
Այս, այս, մեղ մօտ եկէք  
մենք միասին կը գաղթենք,  
ասացին ամեն կողմից թոշունները:

Որք ծիտիկը ուրախացաւ, քոյրիկներին այնտեղ  
բերեց. աշնան վերջին օտար աշխարհ, տաք երկիրներ  
թուան:

Կըտ-կըտ, կըտկտան,  
Եկաւ ճուտս ճըտճըտան.  
Հալածւել է ուրուրից,  
Բաժանւել է իր մօրից,

Ճըտճըտում է ու լալիս,  
կորած մօրն է ման գալիս.

Յ Ո Ջ

Մարգարիտ

Ժ Ճ

Յակոբ


Յ Յ Յ Յ

Յոլակ

Կ Կ Կ Կ

Կարդոս, Կարեն.

մարգարիտ, Յակոբ, Կարդոս, Կուակ




Լաւ ընկեր

Մի փնզի մէջ, ին մեխակից  
մեխակի մօտ, և ուաւ լաւ հոտ,  
ընկաւ վայրի եղաւ հոտոտ,  
մի ժաղիկ, և նուշիկ:

Մենք էլ երէ լաւ ընկերներ  
ին ժաղկի պէս ունենանք,  
իւելօյ, բարի  
կը դառնանք:

Երեք թիրեռնիկ

Աշուն էր. բարակ անձրկ էր մաղում. երեք թիթեռնիկ՝ կարմիր, սպիտակ ու դեղին անձրկի տակ մնացին: Դէս ու դէն ընկան, մի կակաջ տեսան, մօտեցան նրան, այսպէս խնդրեցին.



— Կակաջ, այ կակաջ,  
թերթիկներդ բաց արա,  
յոգնած ընկերներիս տեղ  
արա: Տես, անձրկը մեզ  
թրջել է, մենք մըսում ենք,  
դողում ենք, մի տեղ չու-  
նինք մտնելու. դէհ, շուտ,  
արա, կարմիր կակաջ, թեր-  
թիկներդ բաց արա:

— Լաւ, կարմիր թիթե-  
ռին տեղ կը տամ, իսկ դեղին, սպիտակ թիթեռին չեմ  
տայ:

— Իմ ընկերներից ես չեմ բաժանւի, ասաց կար-  
միր թիթեռը. աւելի լաւ է մէկտեղ մնանք, մէկտեղ  
թրջւենք, մէկտեղ մեռնենք, քան թէ ես մենակ ան-

ընկեր ապրեմ:

Երեք թիթեռը հեռացան,  
խոտերի մէջ տեսան մի  
շուշան. մօտեցան նրան,  
այսպէս խնդրեցին.

—Շուշան, այ շուշան,  
թերթիկներդ բաց արա, յոգ-  
նած ընկերներիս տեղ արա:  
Տես, անձրևը մեզ թրջել է,  
մենք մըսում ենք, դողում  
ենք, մի տեղ չունինք մըտ-  
նելու. դէհ, շուտ արա, սպի-  
տակ շուշան, թերթիկներդ  
բաց արա:

—Լաւ, սպիտակ թիթեռին տեղ կը տամ, իսկ դե-  
ղին, կարմիր թիթեռին չեմ տայ:

—Իմ ընկերներից ես չեմ բաժանվի, ասաց սպի-  
տակ թիթեռը. աւելի լաւ է մէկտեղ մնանք, մէկ-  
տեղ թրջւնք, մէկտեղ մեռնենք, քան թէ ես մե-  
նակ անընկեր ապրեմ:

Երեք թիթեռը նորից հեռացան, այս անգամ նը-  
րանք տեսան մի նարգիզ, մօտեցան նրան, այսպէս  
խնդրեցին.



—Նարգիզ, այ նարգիզ, թեր-  
թիկներդ բաց արա, յոգնած ըն-  
կերներիս տեղ արա: Տես, անձ-  
րևը մեզ թրջել է, մենք մըսում  
ենք, դողում ենք, մի տեղ չու-  
նինք մտնելու. դէհ, շուտ արա,  
դեղին նարգիզ, թերթիկներդ  
բաց արա:




—Լաւ, դեղին թիթեռին տեղ կը տամ, իսկ կարմիր  
սպիտակ թիթեռին չեմ տայ:


—Իմ ընկերներից ես չեմ բաժանվի, ասաց դեղին  
թիթեռը. աւելի լաւ է մէկտեղ մնանք, մէկտեղ  
թրջւնք, մէկտեղ մեռնենք, քան թէ ես մեռնակ ան-  
ընկեր ապրեմ:

Արել վերից ամեն բան տեսաւ. տեսաւ ու լսեց,  
երեք ընկերի սէրը հաւանեց. ամպերը քշեց, անձրևը  
ցրեց, երեք ընկերին նա տաքացրեց ու չորացրեց:

Խատուտիկ, պուտպուտիկ,  
Թեթև թռիչ թիթեռնիկ.  
Ես իմ թռով ծափ կը տամ,  
Ծաղկէ ծաղիկ պար կը գամ:



Դ



Գ

Դաւիթ, Դանէլ


Գարեգին, Գրիգոր

Դաւիթն ու Գրիգորն ընկերներ են:

Երեխաներն անտառում

1

Առաւօտ էր, երեխաները դպրոց էին գնում. Երեք  
մանուկ էլ գրքերն առած՝ անտառ գնացին: Նրանք  
այնտեղ վազեցին, երգեցին, տեսակ տեսակ պտուղներ  
քաղեցին, իսկ երբ յոգնեցին, մի ծառի տակ նստեցին:



Մանուկները տեսան սիրուն սիրուն բզէզներ, ճանձեր,  
մոծակներ. ամենքն էլ ուրախ թռչկոտում էին:

2.

Սիրուն բզէզներ, ճանձեր, ներքև եկէք, մեղ հետ  
խաղացէք, ասացին մանուկները:

—Մենք շտապում ենք, տըզզում՝ տըզտըզում, գործ  
ենք կատարում, ասացին ճանձերը:

—Մեր խմբից ոչ ոք ազատ չէ, ասացին բզէզ-  
ները:

Աշուն է, բաւական ցուրտ է, տուն տեղ ենք ձի-  
նում, տաք բուն պատրաստում, որ մենք չմըսենք,  
իսկ մեր ձւերը ցըտից չսառչեն:

3.

Երեխաները գնացին. գնացին, գնացին, մի խումբ  
մրջիւններ տեսան.

—Փոքրիկ մրջիւններ, եկէք, քիչ խաղանք:

—Մենք անգործ չենք, որ ձեզ հետ խաղանք. չէք

տեսնում, ձմրան համար պաշար ենք հաւաքում, ա-  
սացին մրջիւնները:

Մանուկները էլի գնացին. յանկարծ ծառերի մի-  
ջից մի շատ դուրեկան ձայն լսեցին. վերև նայեցին,  
մի թռչնիկ տեսան:

—Բարև՝ քեզ, բարև, սիրելի թռչնիկ, երգիր մեղ  
համար, եկ ներքև՝ խաղանք:

—Ես պէտք է գնամ ձագերիս համար երգեմ, որ  
հանգիստ քնեն. Ես պէտք է գնամ երգիչ սոխակի եր-  
գերը լսեմ, ձագերիս սովորեցնեմ:

—Աշնան վերջին՝ երբ մենք տաք երկիր գնանք, ճա-  
նապարհին պէտք է միշտ երգենք, որ շուտ չյոգնենք.  
Ես շատ գործ ունիմ, ժամանակ չունիմ:

4.


Երբ մանուկները քիչ էլ գնացին, ծառերի վրայ  
սկիւններ տեսան: Ամենքն էլ  
ուրախ դէս ու դէն վազում,  
թռչկոտում էին, կաղին և ըն-  
կոյզ ըները հաւաքում.

—Փափլիկ սկիւններ, ներքև  
եկէք, մի փոքր խաղանք:

—Ժամանակ չունինք խաղա-  
լու, ասաց մի սկիւո. չէք տես-  
նում, որ մենք պաշար ենք հաւաքում, ձմեռայ հա-  
մար կերակուր պատրաստում:



Երեխաները նորից գնացին, տեսան մի առւակ:  
—Եկէք տղերք, առւակի հետ  
խաղանք:



—Ժամանակ չունիմ ձեզ հետ  
խաղալու. բոյսեր, թփեր, ծառ  
ու ծաղիկներ ինձ են սպասում:  
ինձ են սպասում այծ ու ոչ-  
խաղներ, գառներ, ուլիկներ, որ  
անուշ ջրիցս խմեն, զովանան:  
ինձ են սպասում ուրիշ առու-  
ներ. մենք միանում, մեծանում  
ենք, ջրաղացների բարեր դարձնում, ալիւր շինում,  
մարդկանց համար ձմեռայ պաշար պատրաստում:

Մանուկները տխրեցին. նրանք զարմացան, թէ ին-  
չու ոչ ոք չի ուզում իրենց հետ խաղալ:

Բայց մէկ էլ յանկարծ՝ ծառերի միջից մի փոք-  
րիկ կկու բարձր կանչեց.—կու-կու, կու-կու.



Ես փոքրիկ եմ, բայց ծոյլ չեմ,  
Ամեն օր էլ աշխատում եմ  
Եւ միշտ ուրախ խաղում եմ:

իհի      փ Փ

ֆ      ֆ Ֆ

Փառանձեմ

Ֆլորա

Թիառանշեմնու Փլորան երգում են:

### Չմեռ

#### 1.

Չմեռ է, ինչ ցուրտ է. ինչպէս օրերը կարճ են.  
արեգակն էլ քիչ տաքութիւն է տալիս, մեզ բոլորին  
սառը թողնում փախչում է, փնթփնթալով ասաց փո-  
քրիկ գառնիկը:

—Այս, այս, տխուր է, համաձայնեց Վարդանը. փա-  
փլիկ ձիւնը փաթիլ փաթիլ, լուռ ու հանգիստ գալիս  
է, դաշտ ու անտառ, սար ու ձոր ծածկում է: Զիւն  
է, ձիւն է, միայն ձիւն է ամեն տեղ, արեի տակ  
պսպղում է, արծաթի պէս փայլում: Առուներն ու  
զետերը չեն երևում, նրանք բոլորը հաստ սառոյցով  
ծածկւել են:

—Ելի լաւ է, որ այդպէս է, վրայ բերեց Լևոնը, իսկ  
երբ օրը խիստ ցուրտ է և կամ սաստիկ բուք, այն  
ժամանակ չի կարելի տանից դուրս գալ, ագռաւներն  
ու ճնճղուկները չեն երևում. հիմի լաւ է, քիչ դուրս  
կը գանք, կը խաղանք:

— Օյ, օյ, ինչ քամի է, փոթորիկը ձիւնն առած  
շպրտումէ ամեն տեղ. ով կարող է դուրս գալ փողոց:  
Զիլ զիլ քամին վընդվընդում է. մարդ, կենդանի, վայ-  
րի գաղան նրա ձեռքից փախչում են, տաք տեղերում  
պահում:

— Մայրիկ, այսօր որչափ լաւ է.


— Իհարկէ, նոր տարի է, տօն օր է. թոշկոտալով  
ձայն էր տալիս Օնիկը: Այսօր մենք շատ ուրախ ենք,  
նոր շորեր, նոր գրքեր, խաղալիքներ ու զարդեր ըն-  
ծաներ ենք ստացել: Ստացել ենք մրգեր, քաղցր, հա-  
մեղ պտուղներ:

Ի՞նչպէս լաւ է, ինչ ուրախ է, չէ՞ Աստղիկ:

## Եոր տարի

Ահա հասաւ նոր տարի,      Մանր տղայք են ուրախ,  
Հետը բերեց նոր բարի,      Ունին կաղին, գողինաղ,  
Մանր տղոց ուրախ օր,      Սալորի ջր, չամիչ, թուզ,  
Բարի գաւակ հօրն ու մօր:      Փշատ, ունապ ու ընկոյզ:

Մանր տղայք, չմոռնաք,  
Աշխարհումս չէք մենակ,  
Ուրիշ շատ խեղճ տղայք կան՝  
Աղքատ ու անօդնական:



Զին եւ ձընձղուկը  
Զմեռ էր. ձընձղուկն ե-  
կաւ՝ խեղճ, անօթի, գոմը  
մտաւ. մտաւ, թառաւ մորի  
ծայրին, սիրուն ձիուն՝ ծիւ ծիւ ասաւ.

— Այ սիրուն ձի, եղիր բարի,  
Զմեռ օր է, մի քիչ գարի,  
Իմ բոի չափ, որ ինձ բաշխես,  
Էլի դու միշտ կուշտ կը լինես:  
— Խեղճ ձընձղուկ, վեր առ ու կեր  
Ինչքան կուզես, ասաց մեր ձին,  
Ունեցածս մեզի համար  
Շատ հերիք է մինչև ամառ:

Բանն ովանէ, ես ու դու.  
Իացն ով ուտէ, ես ու դու:

## Զմեռայ գալը

Զմեռն եկաւ, ձիւն էր հագին, ձեռն ու ոտը սառն ու  
սառոյց: Ծաղիկ, ծաղկունք ձիւնի տակին, հազար ափսնս, ձած-  
կեց չորցուց:

— Ինչու եկար, այ ծեր ձմեռ  
 Ու ծածկեցիր դաշտ ու անտառ.  
 Արդեօք չլինի բան ես բերել,  
 Բան ես բերել զու մեզ համար:  
 — Միթէ չգիտէք, այ մանուկներ,  
 Ինչ եմ բերել ես ձեզ համար.  
 Տաք հագուստներ ու նոր տարի,  
 Միրգ ու պտուղ, չիր ու չամիչ:  
 Տաք փափուկ ձիւն, որ ձնէ մարդ  
 Կամ ձնագունդ շինէք, խաղաք.  
 Լաւ պաղի տաք, կապոյտ դառնաք,  
 Կարմիր կապոյտ դուք տուն դառնաք:  
 — Որ այդպէս է, բարնվ եկար,  
 Սիրուն ձմեռ, հազար բարով,  
 Ծերուկ ձմեռ զու մեզ համար,  
 Բարնվ եկար, հազար բարով:  
 —

## Չմեռայ զւարձութիւն



1.

— Արամ, գնանք, խաղանք, սա-  
 ռոյցի վրայ պաղի տանք:  
 — Գնանք, Բագրատ:

— Արամ, տես, ի՞նչպէս ձիւնը փափուկ է, որչափ լաւ է  
 իրար կպչում, եկ, ձնէ մարդ շինենք, ձնագնդի խաղանք:  
 — Որ այդպէս է՝ արի գնանք Լսոնին էլ կանչենք:  
 — Կանչենք, կանչենք:  
 Նրանք գնացին, Լսոնին առան, եղան երեք:  
 — Տղերը, առաջ մեծ ձնագունդ շինենք, ասաց Արամը:  
 Երեքն էլ ձնագունդ շինեցին, փափուկ ձիւնի մէջ այն-  
 չափ գլորեցին, որ շատ մեծացաւ:

— Բագրատ, տես, իմը որչափ մեծ է, էլ չեմ կարող շարժել:  
 — Իմն էլ ծանր է, ես էլ չեմ կարող շարժել:  
 — Լսոն, եկ օգնիր, ասացին Բագրատն ու Արամը:  
 Լսոնն եկաւ. երեքով Արամի գունդը գլորեցին հա գլորե-  
 ցին, այնչափ գլորեցին, մեծացրին, որ տեղից չէր շարժւում:  
 2.

— Այս մէկ, ասաց Լսոնը, սրանից ոտքեր շինենք:  
 Յետոյ միւս ձնագնդերը բերին:  
 — Տղէք, ասաց Լսոնը, ես կը բարձրանամ մեծ գնդի վրայ,  
 Երկուսով տւէք ձեր գնդերից մէկը, որ վրան դնեմ:  
 Նրանք տւին:  
 — Այս այսպէս, թող սա լինի ձնէ մարդու փորը. միւսն էլ  
 տւէք, կրկնեց Լսոնը, այս էլ փորի վրայ:  
 Լսոնը շինեց և ասաց. — Այս էլ կուրծքը, այս փոսերն էլ  
 շորերի կոճակները. սրանք էլ ձեռքերը:  
 — Այժմ ձիւն բերէք, գլուխը շինենք. այդ էլ արին:  
 — Լսոն, առ այս ածուխները աչքերի տեղը դիր, ասաց  
 Արամը:  
 Այդ էլ արաւ:  
 — Քիթը մոռացար, Լսոն, քիթը, այ քեզ բան, ասաց Բագ-  
 րատը:  
 Էլի ձիւն բերին, մեծ քիթ շինեցին, մի մեծ փայտ էլ  
 ձեռքը տւին:  
 Պատրաստ է, ասաց Լսոնը և ներքն թռաւ:

3.

Բագրատ, Արամ, այժմ եկէք ձնագնդի շինենք, որ նը-  
 շան առնենք:  
 — Լաւ, ասացին միւսները և գործի եղան:  
 — Սկսենք, ասաց Արամը:  
 — Կարճ ժամանակով ես ձեզ առաջնորդ, ասաց Բագ-  
 րատը. քսան քայլ հեռու, երբ ասեմ մէկ, երեք՝ միա-

սին խփենք. համաձայն էք:

—Հա, հա, միայն շուտ արա:

—Պատրաստւէք, ասաց Բագրատը:

—Մէկ, երկու, երեք: Զնագնդով սկսեցին խփել:

—Ուռա... կանչեց Լևոնը, քիթը թռաւ, քիթ չկայ. որովհետեւ առաջ ես նշան առայ, ուրեմն ես եմ առաջնորդ:

—Լաւ, լաւ, շարունակիր, ասացին միւսները.

—Այժմ գլխին խփենք, ասաւ Լևոնը. մէկ, երկու երեք:

Զնագնդերը կարկտի նման թափւեցին ձնէ մարդու գլխին:

—Կեցցէ, կեցցէ... ես էլ առաջնորդ; կանչեց Արամը.

տեսէք, գլխի կէսը չկայ, ի՞նչ ծիծաղելի դարձաւ:

—Ես էլ առաջնորդ, ես էլ առաջնորդ, բղաւեց Բագրատը.

այ, գլխի միւս կողմն էլ չկայ:

—Խեղճ ձնէ մարդ, էդ ի՞նչ եղար—հա, հա, հա, ասացին մանուկները կուշտ ծիծաղելով ու տուն գնացին:



### Չնէ մարդ

Տղերք, տեսէք ձնէ մարդը

Փայտը ձեռքին ահ է տալիս,

Բայց չի կարող մարդու զարկել:

—Այ ձնէ մարդ, դու շատ խեղճ ես,

Փայտ էլ ունես, բայց անճար ես.

Ոչ կարող ես տեղից ժաժ գալ,

Ոչ կարող ես, խաղալ, ման գալ.

Սիրուն արև, մի երևար,

Թէ չէ խեղճը իւղի նման

Շուտ կը հալչի, ջուր կը դառնայ:

Լիշնան տերեւը

միրսում եմ, միրսում. Շուտ եկ ինչ օգնի,

Ժառի վրայից : Որ ժառից իզնեմ,

Թթերեն է կանկում: Ախպակու փափուկ

Քամի զան, խամի, վերմակով ժամկւմ:



### Պոչատ կաշաղակը

1.

Լինում է չի լինում, մի պառաւ տատիկ է լինում. տատիկը մի այծ է ունենում. նա ամեն օր կթում, թոռնիկնե-

ըին կերակրում էր։ Մի օր էլ կաթը դրեց ծառի տակ, ինքը  
գնաց փայտ բերելու, որ կերակրուր պատրաստէ։

Այս բանը կաչաղակը տեսաւ. նա թռաւ կանգնեց ամա-  
նի վրայ ու կաթը թափեց։ Պառաւը բարկացաւ, ձեռքի փայ-  
տով խփեց կաչաղակին, պոչը կտրեց։

2.

Կաչաղակը թռաւ կանգնեց ծառին ու ասաց.

—Տատիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ կցմըցեմ, պոչս սա-  
ղացնում երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մո-  
չատ կաչաղակն եկաւ։

Պառաւն ասաց. —Գնա կաթս բեր, որ պոչդ տամ։

Կաչաղակը թռաւ գնաց կովի մօտ և ասաց.

—Կովիկ, կովիկ, կաթ տուր, կաթը տանեմ պառաւին տամ,  
պառաւը պոչս տայ, կցեմ կցմըցեմ, պոչս սաղացնեմ, երթամ  
ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն  
եկաւ։

Կովն ասաց.

—Գնա ինձ համար խոտ բեր, որ բեզ կաթ տամ։

—Կաչաղակը թռաւ գնաց արտի մօտ և ասաց.

—Արտ, արտ, ինձ խոտ տուր, խոտը տանեմ կովին տամ,  
կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը  
պոչս տայ, կցեմ կցմըցեմ, պոչս սաղացնեմ, որ չասեն՝ պոչատ  
մոչատ կաչաղակն եկաւ։

Արտն ասաց.

—Գնա ինձ համար ջուր բեր։

Կաչաղակը թռաւ գնաց ջրբաշխի մօտ և ասաց.

—Ջրբաշխ, ջրբաշխ, ինձ ջուր տուր, ջուրը տանեմ ար-  
տին տամ, արտը ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ,  
կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ. պառաւը  
պոչս տայ, կցեմ կցմըցեմ, պոչս սաղացնեմ երթամ ընկեր-  
ներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

Ջրբաշխն ասաց. —Գնա ինձ համար բահ բեր։

Կաչաղակը թռաւ գնաց դարբնի մօտ և ասաց.

—Դարբին, դարբին, ինձ բահ տուր, բահը տանեմ ջըր-  
բաշխին, ջրբաշխը ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ,  
արտը ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ  
կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ,  
կցեմ կցմըցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ,  
որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

Դարբինն ասաց. —Գնա ինձ համար ձու բեր։

Կաչաղակը թռաւ գնաց հաւի մօտ և ասաց.

—Հաւիկ, հաւիկ ինձ ձու տուր. ձուն տանեմ դարբնին  
տամ, դարբինը ինձ բահ տայ, բահը տանեմ ջրբաշխին, ջըր-  
բաշխը ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ  
խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ,  
կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ կցմ-  
ըցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չա-  
սեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

Հաւը խղճաց, նրան մի ձու տւեց։

Կաչաղակը շատ ուրախացաւ. ձուն տարաւ դարբնին,  
դարբինը նրան բահ տւեց. բահը տարաւ ջրբաշխին, ջրբաշխը  
նրան ջուր տւեց. ջուրը տարաւ արտին, արտը նրան  
տւեց. խոտը տարաւ կովին, կովը նրան կաթ տւեց. կաթը  
տարաւ պառաւին, պառաւը նրա պոչը տւեց. կցեց կցմըցեց,  
պոչը սաղացըց, գնաց ընկերներին հասաւ։

## Գարուն

1

—Արամ, նայիր, ի՞նչ սիրուն է, գեղեցիկ է գարունը։ Սառած երկրին, թմրած ծառերին նա կեանք է տալիս. նա կեանք է տալիս, բոյսեր բուսացնում, ծառեր, ծաղիկներ նոր հարսի նման նաշխուն դարդարում։

—Այս, կուսիկ գեղեցիկ է գարունը. սարեր ձորեր, դաշտեր ու արտեր կանաչ են հագնում։ Տես, թէ ինչպէս թիթեռները, մեղուները սիրուն, գոյն-գոյն թռչնիկները ուրախ են, արևի տակ սիրով խաղում, աշխատում են։

2

—Ճիշտ այդպէս է, ասաց Վանին. գարունն իր հետ տեսակ տեսակ թռչուններ է միշտ բերում-նրանք ուրախ երգ են երգում, ըներ շինում, կարկատում։ Առուներն ու առւակները, անուշ-անուշ աղբիւրները քաղցր-սիրուն կարկաչով վազում-հոսում, կեանք են տարածում։

3

Երբ որ գալիս է նաշխուն գարունը, գիւղացիները դաշտ են գուրս գալիս, հողը վարում, հատիկներ ցանում, որ ծլեն ծաղկեն պտուղ տան ասաց Սուրիկը։

—Իսկ զուք տեսել էք կանաչ դաշտի մէջ, սիրուն մարգի մէջ ոչխարի հօտեր, ուլեր, գառնուկներ ի՞նչպէս խաղում են, վազում, թռչկոտում, համեղ խոտ ուտում, ասաց Արմիկը։


Ո՛ր մէկն ասենք, ասացին շատերը. — նաշխուն գարունը երկրին կեանք է տալիս կեանք է տալիս և ուրախացնում։

## Գարուն

Արի, գարուն,  
Արի, սիրուն,  
Արի ու բեր  
Նաշխուն դաշտեր,  
Մաքուր առւակ,  
Պարզ սառնորակ,

Անթիւ հաւաքեր,  
Անուշ երգեր,  
Գառներ, հովիւ,  
Ծաղկունք անթիւ,  
Ծառ ու տերե,  
Պայծառ արև։

Գարի հայ, թրութան, պապին  
ուտէ, երրայ գուրան։



## Բաղենու հիւրերը

1.

Գարուն է. բալենին նոր է կանաչել, նոր է զարդարւել մանր տերեներով։ Մէկ մէկի յետեկց հիւրեր են գալիս, նայում են բալենուն, ուրախանում են։

2.

Ամենից առաջ բալենուն հիւր են լինում թրթուրները։ Սրանք ազահ ազահ ուտում են նրա փափլիկ տերեները։ Անցնում է քիչ ժամանակ, բալենին զուգում է սիրունիկ, սպիտակ ծաղիկներով։ Այս անգամ նրան տեսութեան են գալիս մեղուները, ծաղիկներից մեղք են ծծում։


Շաբաթներ յետոյ բալենին ծածկում է կարմիր կարմիր պտուղներով։ Հիմա էլ ուրախ ուրախ հիւր են գալիս թռչուներն ու մանուկները։





## Սագ

Ասա, տեսնեմ, իմ սիրունիկ,  
իմ փափլիկ, սիպտակ սագիկ.  
Ուր ես գնում արագ արագ,  
Քնըուշ ձագերդ հետդ առած:  
  
—Ես գնում եմ արածելու,  
Զբունելու, լողանալու,  
Զագերիս հետ դաշտում մէկտեղ  
Որդ գտնելու փափուկ, համեղ:  
  
—Ես խնդրում եմ բարի եղիր,  
Զագուկներիս միշտ լաւ նայիր,  
Որ քեզ համար փափլիկ, փափլիկ  
Բարձի համար տամ փետուրիկ:



## Պարտեզում

1.

Փոքրիկ Լուսիկն ու Ցոլակը հայրիկի հետ գնացին պարտէզ: Այնտեղ տեսան կարմիր, սիրուն վարդեր, կապոյտ, հոտոտ մանուշակներ, ճերմակ ճերմակ շուշաններ և ուրիշ շատ ծաղիկներ: Երկուսն էլ ուրախ ուրախ վրայ հասան, քաղեցին, սիրուն վնջեր կապեցին:

2.

Նրանք տեսան, որ հայրիկը ծառերը մէկ մէկ թափ է տալիս. ծառերի վրայից թափւում են շատ բղէզներ և թրթուրներ:  
—Հայրիկ, ինչու ես դրանց վարթափում, հարցրեց Ցոլակը:  
—Եթէ բգէզները, թրթուրները ծա-



ոերի վրայ մնան, տերեներն ու պտուղները կուտեն, կը փը-  
չացնեն. Էն ժամանակ տանձ ու խնձոր, սալոր, ծիրան և ու-  
րիշ պտուղներ էլ չենք ունենայ, ասաց հայրը:

3.


Մէկ էլ կուսիկը ծառի վրայ տեսաւ մի շատ գեղեցիկ  
թռչնիկ սուսիկ փուսիկ մօտեցաւ ծառին և ուժով թափ տւեց,  
բայց թռչնիկը վայր չընկաւ:



## Ծիտիկ



Մեր պարտէզի ծառի ճեղքում  
Ճընճղուկը շինեց մի բուն.  
Այնտեղ ածեց երկու ձւիկ,  
Երկու ձւիկ, երկու ծիտիկ.  
Ծիտիկներն ասին ծիկ, ծիկ,  
Մեզ կը սիրեմ, անուշ մայրիկ:



## Անտառում

1.

—Անտառում ի՞նչ տեսար, պատմիր տեսնեմ, հարցըեց  
մայրը:

—Շատ բան տեսայ, մայրիկ ջան. Ի՞նչ գեղեցիկ է ան-  
տառը, ի՞նչ սիրուն է գարնանը:

Անտառում շատ ծառերի կոկոնները ուռել, փքւել, մեծա-  
ցել են. մի քանիսը ծածկւել են մանրիկ, կանաչ տերևներով,  
իսկ շատերը զարդարւել են գեղեցիկ, գոյն գոյն ծաղիկներով:  
Ծաղիկների անուշ հոտով ամբողջ անտառը լցւել է:

2.

Ես անտառում շատ ման եկայ. այնտեղ տեսայ լորենի,  
հացենի, խնձորենի, սալորենի, կաղնի, կեչի, մայրի և ուրիշ  
ծառեր. Երբ յոզնեցի, մի ծառի տակ նստեցի. թռչունները  
շատ գեղեցիկ երգում էին. Ես զարմացած լսում էի:

Անտառի մէջ նոյնպէս տեսայ փայտ կտրողներ. նրանք  
իրենց կացիններով չոր ծառերը մանր մանր կտրում էին, վա-  
ռելու փայտ պատրաստում: Անտառի մէջ շատ մանուկներ  
կային. մի քանիսը չոր ծառերի ճիւղեր էին հաւաքում, մի

Քանիսն էլ մանուշակներ և շուշաններ քաղում:

3.



աղբիւրներ: Անտառի մօտ արածում էր մօտիկ գիւղի նախիրը: Նախիրի մօտ պառկած էին մեծ մեծ գամբո շները:

## Մայիսին

Երբ մայիսին ես անցնում եմ  
Կանչազարդ անտառով,  
Շատ թոշուններ ես տեսնում եմ  
Այս ու այն կողմ թոշելով:  
Ես տեսնում եմ շատ ծաղիկներ  
Անուշ հոտով բուրելիս,  
Ես տեսնում եմ թիթեռնիկներ  
Միշտ վեր ու վար թոշելիս:  
Գարնւն է, գարնւն է,  
Տեսէք, ինչպէս սիրուն է:  
Ծաղիկներից ես կապում եմ  
Սիրուն փնջեր ինձ համար,  
Թիթեռների յետքից ընկած՝  
Ես վազում եմ անդադար:

Յանկարծ բօմբ... Ես  
վեր թռայ. թռչունները  
լուցին: Մէկ էլ տեսայ  
նազաստակը արիւնլւայ  
փախչում էր, որսի շունն  
էլ նրա յետեկից վա-  
զում:

Ես անտառում նոյն-  
պէս տեսայ սառնորակ  
աղբիւրներ: Անտառի մօտ արածում էր մօտիկ գիւղի նա-  
խիրը: Նախիրի մօտ պառկած էին մեծ մեծ գամբո շները:

Ուրախ է, գարուն է,  
Տեսէք, որչափ սիրուն է.  
Գարուն է, նաշխուն է,  
Այս նա անչափ սիրուն է:

Զամիկ հատ հատ, թեղրիկ մատ մատ:



## Արտուտի բունը

1.

—Հայրիկ, այսօր արտի մէջ մի բուն տեսանք. նրա մէջ  
երեք փոքրիկ ձու կար:

—Ես էլ տեսայ, ես էլ տեսայ, ասաց Նուշիկը:

—Հայրիկ, բնի մօտ տեսանք մի արտուտիկ. նա շարու-  
նակ թըռոչկոտում էր, ճըլւըլում. մենք սուսիկ փուսիկ արտի  
մէջ կանգնեցինք. մէկ էլ արտուտիկը եկաւ, իջաւ՝ բունը մտաւ,  
Ճիկների վրայ նստեց, ճայնը կտրեց: Ասա, հայրիկ, ինչու  
համար նա նստեց, ինչու այդպէս ճայնը կտրեց:

2.

Հայրիկն ասաց.

—Արտուտիկը ճւի վրայ պէտք  
է նստի, տաքացնի, որ այնտեղից  
փոքրիկ ձագեր, սիրուն ձագեր  
դուրս գան: Մայրը նրանց համար




որդ է բերում, կերակրում, որ ձագերը շուտ մեծանան, թևեր  
առնեմ, մօր հետ թոչեն, ուրախանան:

### Արտուտի երգը

Քեզ եմ գովում,  
Ծաղիկ գարուն,  
Ալ ու ալւան  
Ծաղիկ սիրուն.  
Քո սեղանը  
Անհատնելի  
Իմ ձագերին  
Կեր է տալի.

Իմ ձագերը  
Բնիս միջին,  
Զագն էլ, բունն էլ  
Ծոցիդ միջին  
Քեզ եմ գովում,  
Ծաղիկ գարուն,  
Ալ ու ալւան  
Ծաղիկ սիրուն:



### Ծիծեննակի բունը

1.

Ծիծեննակը ծըլւըլալով եկաւ, հասաւ մեր երկիրը:

Ծիծեննակը ուրախ ուրախ ամեն կողմ թոշկոտեց, ան-  
ցած տարւայ բունը գտաւ, բունը գտաւ կարկատեց. բուրդ  
ու մամուռ, փափուկ չոր խոտ բունը բերեց հաւաքեց, փափ-  
լիկ տաք տեղ պատրաստեց:

2.

Մի օր էլ եկաւ, բնի մէջ մի ճնճղուկ տեսաւ. ծիծեննակը  
շատ զարմացաւ. «Սիրուն ճնճղուկ, այդ իմ բունն է, ես եմ շի-  
նել, կարկատել, որ դրա մէջ ձւեր ածեմ, ձագեր հանեմ, դուրս  
եկ բնիցս»:

Ճնճղուկը ծիծաղեց:

—Ի՞նչ ես ասում, այս լաւ բնից դուրս չեմ գայ, գնա  
պլխիդ ճարը տես:

3.

Ծիծեննակը որչափ խնդրեց, աղաչեց, ճնճղուկը չլսեց.  
տիսուր տրտում գնաց, ամեն ինչ ընկերներին պատմեց: Ծի-  
ծեննակները խումբ եկան ճնճղուկին խնդրեցին, որ  
դուրս գայ, բայց ճնճղուկը էլի չլսեց:

—Ծիկ, ծիկ, ծիկ, ասաց մի ծիծեննակ.


պէտք է պատժել, պէտք պատժել չար թոչունին:

—Ծիկ, ծիկ, ծիկ, ասացին միւս ծիծեննակները. պէտք է  
պատժել, պէտք է պատժել չար ճնճղուկին:

Նրանք թուան... Քիչ յետոյ հարիւրաւոր ծիծեննակներ  
ցեխ, կաւ կտուցներն առած՝ եկան բնի անցքը ծածկեցին,  
ճընճղուկին պատժեցին:

### Ծիծեննակ

Ծիծեննակ, ծիծեննակ,  
Դու գարնան սիրուն թոշնակ,  
Դէպի ուր ինձ ասա,  
Թոշում ես այդպէս արագ:



### Չանկօ Պանկօ

1.

Լինում է չի լինում, մի այծ է լինում. այս այծը ունե-  
նում է երկու փոքրիկ սիրուն ուլիկ, մէկի անունը Չանկօ,  
միւսինը Պանկօ:

Մայրն ամեն օր գնում արածում էր և ուղիկների համար կաթ էր պատրաստում։ Երբ Զանկլօն ու Պանկլօն մի քիչ մեծացան, ասացին.

—Մայրիկ, մեղ էլ տար անտառ, մենք էլ ուզում ենք արածել. ծաղիկներ ուտել, սառը ջուր խմել։

—Դուք փոքր էր, ասաց մայրը, մի քիչ էլ տանը մնացէք, մի փոքր էլ մեծացէք, յետոյ կը տանեմ։

—Որ այդպէս է, մեղ համար փափուկ խոտ և սառը ջուր բեր անտառից, ասացին Զանկլօն ու Պանկլօն։

—Շատ լաւ, ասաց մայրը. նա ամեն օր Զանկլօ-Պանկլօի համար պողերով փափուկ խոտ էր բերում, բերանով սառը ջուր, խոկ ծիծիկներով անուշ կաթ։

Ամեն օր անտառ գնալիս՝ մայրն ասում էր. —Զանկլօ, Պանկլօ ուղիկներ, դուռը փակ պահեցէք, թէ չէ չար գայլը կը գայ և ձեղ կը տանի։

Երբ մայրը տուն էր վերադառնում, պողերով դուռը ծեծում էր, բարակ ձայնով երգում և ասում էր.

Զանկլօ, Այանկլօ ուղիկներ,

իմ սիրունիկ բալիկներ,

նկէն, դուռը բաց արէն,

կերէն, խմբէն, կլտացէն։

Ես ձեղ համար լիուլի

կաթ եմ բերել իւղալի,

Խոտ եմ բերել հիւթալի,

Զուր եմ բերել աղբիւրի։

Զանկլօն ու Պանկլօն վազում, դուռը բաց էին անում, կաթը ծծում, խոտը ուտում, ջուրը խմում կշտանում էին։

2.

Մի գայլ այս բանը տեսնում է. նա մտածում է ուղիկներին ուտել. մի օր, երբ այծը տանը չի լինում՝ մօտենում է տնակին, դուռը ծեծում և երկելով ասում է.

Զանկլօ, Պանկլօ ուղիկներ,

իմ սիրունիկ բալիկներ,

եկէք, դուռը բաց արէք,

Կերէք, խմէք կշտացէք։

Ես ձեղ համար լիուլի

կաթ եմ բերել իւղալի,

Խոտ եմ բերել հիւթալի,

Զուր եմ բերել աղբիւրի։

Ուղիկները դուռը բաց չարին և ասացին. —Դու մեր մայրը չես, մեր մայրը բարակ ձայն ունի, քո ձայնը հաստ է։

Քիչ յետոյ գայլը նորից մօտեցաւ այծի տնակին. այս անգամ բարակ ձայնով երգեց, որ դուռը բանան։

Զանկլօն ու Պանկլօն դուն ճեղքից տեսաւ գայլի սկ սկ ոտները և ասացին. «Մեր մօր ոտները սպիտակ են, քո ոտները սկ են, դու մեր մայրը չես, դուռը բաց չենք անի»։

Գայլը վազեց գնաց ջրաղաց, ոտները ալիւրով սպիտակացրեց, կրկին եկաւ դուռը ծեծեց և շատ բարակ ձայնով երգեց, որ դուռը բաց անեն։

Այս անգամ Զանկլօն ու Պանկլօն դուռը բաց արին, բայց երբ գայլին տեսան, շատ շատ վախեցան։ Գայլը երկուսին էլ կուլ տւեց և գնաց։

3.

Մայրը տուն դարձաւ. երբ նա տնակի դուռը բաց տեսաւ, սաստիկ վախեցաւ, դէս ու դէն ընկաւ, շատ ման եկաւ, ուղիկներին չգտաւ։

—Էն գայլն է ուղիկներիս խաբել ու տարել, պէտք է չար գայլին պատժեմ, պէտք է ուղիկներիս աղատեմ։

Այծը մտածեց, մտածեց, հնարը գտաւ, նա մի աման սեր առաւ, մի աման մածուն, գնաց դարբնի մօտ և ասաց.

—Դարբին, այ դարբին, ես քեզ համար սեր ու մածուն եմ բերել. ի՞նչ կը լինի դրա տեղը իմ պողերը լաւ սրես, որ չար գայլի հետ կուեմ, Զանկլօ, Պանկլօ ուլիկներիս ազատեմ:

Դարբինը այծի պողերը դանակի պէս լաւ սրեց:

Այծը գնաց գայլի տան կը տուրը, հողը քանդեց և երդիկից գայլի գլխին ածեց:


Գայլը բարկացած կանչեց.

—Ո՞վէ իմ կտուրը բանդում:

—Ես եմ քանդում, ասաց այծը. ասա տեսնեմ, դժւ ես տարել իմ Զանկլօին, դժւ ես տարել իմ Պանկլօին, թէ որ քաջ ես, դուրս եկ կուենք:

—Ես եմ տարել—կերել քո Զանկլօին, ես եմ տարել—կերել քո Պանկլօին, ես դուրս

կը գամ կուելու, ասաց գայլը:



Նրանք կուեցին. այծը սուր սուր պողերով խփեց գայլի փորը պատռեց: Գայլը վայր ընկաւ, Զանկլօն ու Պանկլօն ուրախ դուրս թռան:

## Աի-կի-լի-կի... աբրորն եմ

Կի-կի-լի-կի... Աքլորն եմ,

Կի-կի-լի-կի... Թագւորն եմ,

Մի հաւ ունեմ տունը չէ,

Մի հաւ ունեմ բունը չէ,

Ես Աքլորիս հայն ի՞նչ է...

Մին էլ մի ճուտ վաղելով

ճտճտաց.

—Բա չես ասի, հայրիկ, աանտիկին Մարօն չալտիկ Վառօին ծախեց չարչուն, չիթ առաւ, նստել է ու իր քոթոթ վաշիկի համար չուշիկ է կարում:

Աքլորն իսկոյն վաղեց տուն, Մարօի ձեռքից Ասեղը խլեց, պապի ձեռքից Կոպալը, դուրս թռաւ, որ գնայ իր Վառօին չարչու ձեռքից ազատի:

Դոնից դուրս գալիս կատուն հարցրեց.

—Ո՞ւր էք գնում, Ասեղ.

«Կոպալին հարցրու»:

—Ո՞ւր էք գնում, Կոպալ.

«Աքլորին հարցրու»:

—Ո՞ւր էք գնում, Աքլոր.

Կի-կի-լի-կի... Աքլորն եմ,

Կի-կի-լի-կի... Թագւորն եմ.

Մի հաւ ունեմ տունը չէ,

Մի հաւ ունեմ բունը չէ,

Մինն էլ տարել է չարչին,

Գնամ պատժեմ տան միջին:

—Ես էլ կը գամ...

«Լաւ արի, երեք չըլինենք չորս լինենք»:

Մի քիչ էլ գնացին, Շունը

հարցրեց.

—Ո՞ւր էք գնում, Ասեղ.

«Կոպալին հարցրու»:

—Ո՞ւր էք գնում, Կոպալ.

«Կատւին հարցրու»:

—Ո՞ւր էք գնում կատու,

«Աքլորին հարցրու».

—Ո՞ւր էք գնում, Աքլոր.

Կի-կի-լի-կի... Աքլորն եմ,

Կի-կի-լի-կի... Թագւորն եմ.

Մի հաւ ունեմ տունը չէ,

Մի հաւ ունեմ բունը չէ,

Մինն էլ տարել է չարչին,

Գնամ պատժեմ տան միջին.

—Ես էլ կը գամ...

«Լաւ արի, երեք չըլինենք, հինգ լինենք»:

Մի քիչ գնացին՝ Ուլիկը հարցրեց.

—Ո՞ւր էք գնում, Ասեղ.

«Կոպալին հարցրու»:

—Ո՞ւր էք գնում, Կոպալ.

«Կատւին հարցրու»:

—Ո՞ւր էք գնում, Կատու.

«Շանը հարցրու»:

—Ո՞ւր էք գնում, Շուն,

«Աքլորին հարցրու»:

—Ո՞ւր էք գնում, Աքլոր.

Կի-կի-լի-կի, Աքլորն եմ,

Կի-կի-լի-կի, Թագւորն եմ,

Մի հաւ ունեմ տունը չէ,

Մի հաւ ունեմ բունը չէ,

Մինն էլ տարել է չարչին,

Գնամ պատժեմ տան միջին:

—Ես էլ կը գամ...

Լաւ, հինգ չըլինենք, վեց լի-  
նինք:

Մի քիչ էլ որ գնացին, ի-  
շուկը հարցրեց.

—Ուր էք գնում, Ասեղ.

«Կոպալին հարցրու»:

Ուր էք գնում, Կոպալ.

«Կատւին հարցրու».

—Ուր էք գնում, Կատու.

«Շանը հարցրու».

—Ուր էք գնում, Շուն.

«Ուլիկին հարցրու».

—Ուր էք գնում, Ուլիկ.

«Աքլորին հարցրու».

—Ուր էք գնում, Աքլոր.

Կի-կի-լի-կի... Աքլորն եմ,

Կի-կի-լի-կի... Թագւորն եմ,

Մի հաւ ունեմ տունը չէ,

Մի հաւ ունեմ բունը չէ,

Մինն էլ տարել է չարչին՝

Գնամ պատժեմ տան միջին:

—Ես էլ կը գամ.

«Լաւ արի, վեցը չըլինենք,  
Եօթը. լինինք»

Ասեղը Կոպալը, Կատուն,  
Շունը. Ուլիկը, Իշուկը և Աք-

լորը ճամփա ընկան, գնացին,

գնացին և կէս գիշերին վրայ

տւին չարչուն քնած տեղը.

Ասեղը շուկուլւեց չարչու դօ-  
շակին.

Կոպալը կանգնեց զուան ետեղ.

Կատուն նստեց ոտների տակը.

Աքլորը ճրագթաթին.

Շունը դռանը պալրզեց.

Ուլիկը, Իշուկը կտուրը բար-

ձրացան:  
Ասեղը սկսեց ծակծկել չար-  
չու կողերը.  
Կատուն ճանկոտել ոտները.  
Իշուկը, Ուլիկը վազվեցին  
և դղրդացրին կտուրը:  
Չարչին խիստ վախեցաւ:

Ելաւ որ ճրագ անի,

Աքլորը թեները թափահարեց.

Վազեց որ դանից վախչի,

Կոպալը կոպալտեց.

Եկաւ որ թոնիրը մտնի,

Կատուն ճանկոտեց.

Խեղճի ճարը կտրւեց. վեր

կացաւ ու մի բանի կոպալ  
ուտելով, լեղապատառ դոնի-  
ցը դուրս վախաւ.

Դունը Շունը կծեց:

Կտուրից Ուլիկն ու Իշուկը

կանչեցին—բռնեցէք, հա բը-  
նեցէք.

Չարչին վախաւ. էն վախչեն

է որ վախչում է:

Կատուն մտաւ հաւանոցից

հաւը դուրս բերաւ:

Աքլորը նստեց Իշուկի վրայ,

Հաւը իր առաջը նստեցրեց,

Կոպալի գլխին խփեց Ասեղը և

դրեց իր ուսին:

Միւս ընկերները-կատուն,

Շունը, Ուլը շրջապատեցին

Իշուկին և այնպէս մլաւելով,

հաչելով, մկմկալով և զուալով,

կիկիլիկի կանչելով, լուսաբա-

ցին գիւղ մտան:

Աքլորը Իշուկի վրայից թը-

ռաւ կտուրը և հպարտ-հպարտ  
երգեց.

Կի-կի-լի-կի... Աքլորն եմ,

Կի-կի-լի-կի... Թագւորն եմ,

Մի հաւ ունեմ տունն է,

Մի հաւ ունեմ բունն է,

Մինն էլ տարել էլ չարչին.

Դուռ ու դրկից ժողւեցի,

Մութ գիշերով գնացի,

Զարչուն տան մէջ պատժեցի,

Վառաս տարել էր գերի,

Գնացի ու ետ բերի.

Կի-կի-լի-կի... Թագւորն եմ,

Կի-կի-լի-կի... Աքլորն եմ:

## Ամառ

1.

Գարունն անցնում է, գալիս է ամառ. օրերը երկարանում են, գիշերները կարճանում: Արեգակը երկնքի վրայ երկար է մում և շատ տաքացնում:

Շոգ է. ամեն տեղ կրակ է թափում. բոլոր կենդանիները փախչում մտնում են հոգ տեղեր: Ամառայ անձրեւ մարդկանց և բոյսերին զովացնում է:

2.

Այդիների մէջ հասնում են ամեն տեսակ քաղցր, համեղ ծիրաններ, կարմրաթշիկ կեռամներ, տանձեր, խնձորներ և ուրիշ պտուղներ: Բոստաններում հասնում են ձմերուկներ, սեխեր, վարունկներ և տեսակ տեսակ բանջարներ:

3.

Արտերում գեղնում, հասնում են ցորեն, գարի, հաճար և ուրիշ հացահատիկներ: Գիւղացին շատ ուրախ է, դուրս է գալիս դաշտ, արիւն քրտինք է թափում, հունձ է անում, բարդ բարդում, մեծ սայլերով կալը բերում, ծեծում է. ծըմեռայ պաշար պատրաստում:

## Ամառ

Սաստիկ շոգ է, ցորեն, գարի հասել են,  
Հնձողները խոտը քաղել դիզել են.  
Բոլոր ծառերը ծածկւել են տերևով,  
Պտուղները ճիթ են անում ժպտալով.

Խիթն է, ախտն է,

Խրել խիստ կը վառէ:

## Զմրուխտ եղնակ

«Զմրուխտ եղնակ, ոսկի եղնակ,  
Զարկիր, խաղանք միասին»:  
—Ի՞նչպէս խաղանք, սիրուն հարսիկ,  
Ճաշ ես տանում Մինասին:  
«Մինասը թնդ իր հունձն անի,  
Զառ թերդ գու զարկիր»:

Եղնակն օդում խաղ է անում,  
Հարսի գլխով պտըտում.  
Հարսն ուզում է նրան բռնել,  
Տի-նի-նի-նի վազվզում:

Օրը մթնեց. հնձւոր Մինաս  
Սոված մնաց դաշտումը.  
Խեղճ երեխան լացից ճագեց,  
Խմորը քացխեց տաշտումը:


## Արագիլի սերը

1.

Արագիլը գարնանը վերադարձաւ, գտաւ իր բունը տան կտրի վրայ, նորոգեց, սարքեց, երեք ձու ածեց, երեք ձագ հանեց: Արագիլը դէս ու դէն թուաւ, ձագերի համար գորաեր, մողէսներ բերեց կերակրեց:

2.


Ամառը վրայ հասաւ. արագիլի ձագերը նոր էին փորձեր անում, որ թոշեն: Մի օր էլ տունը կրակ ընկաւ. հրդեհը շատ մեծացաւ, չկարողացան հանգցնել:



Արագիլը շատ վախեցաւ, վեր վար թռաւ, օգնութիւն կանչեց։ Քանի քանի անզամ փորձեց ձագերին բերանն առնել բնից փախցնել, կրակից աղատել։

Այս բանը նրան չյաջողւեց ու չյաջողւեց։

Երբ տեսաւ, որ էլ ճար չկայ, թևերը փռեց ձագերի վրայ, ուզեց պաշտպանել։ Կրակի բոցերը վերև բարձրացան։ Արագիլը իր ձագերի հետ միասին այրւեց։



## Չղիկ

1.

—Բարե ձեղ, թռչնիկներ, ինձ էլ ձեր մէջ ընդունեցէք։ Ես ուզում եմ ձեղ հետ ապրել, ասաց չղիկը։

—Դու ով ես, հարցրեց մի թռչնիկ։

—Դու մեղնից չեմ, ասաց մի ուրիշը։

—Որ ձեղնից չեմ, ապա ի՞նչպէս ձեղ պէս թռչում եմ, ասաց չղիկը։

Թռչնիկները զարմացան։

—Նա մեղնից է, ասաց մէկը։


—Նա մեղնից չէ, պնդեց միւսը։

միւսը։

Թռչնիկների մէջ կոիւ ընկաւ։

Մի խելօք ծիտ էլ չղիկին

ասաց։



—Եթէ ուզում ես մեղ հետ ապրել, պէտք է հարկ տաս։ Չղիկը բարկացաւ, հեռացաւ գնաց։

2.

Այս անզամ չղիկը գնաց մկների մօտ և ասաց։

—Բարե ձեղ, բոյրիկներ, ինձ էլ ձեր մէջ ընդունեցէք, ես ուզում եմ ձեղ հետ ապրել։

—Դու ով ես, հարցրեց մի

մուկ։

—Դու մեղնից չեմ, ասաց

մի ուրիշը։

—Որ ձեղնից չեմ, ապա ի՞ն-

չու ձեղ նման քիթ ու բերան ունիմ, ասաց չղիկը։

—Նա մեղնից է, ասաց մէկը։

—Նա մեղնից չէ, պնդեց միւսը։

Մկների մէջ կոիւ ընկաւ։

Մի մուկ էլ չղիկին ասաց։

—Եթէ ուզում ես մեղ հետ ապրել, պէտք է հարկ տաս։ Չղիկը բարկացաւ, հեռացաւ գնաց։

3.

Այն օրից դէսը մութ քարերի մէջ, ծառերի ձեղում նա մենակ ապրեց. նա մենակ ապրեց, որ էլ հարկ չտայ։ Նա ցերեկները քնում է, գիշերները դուրս գալիս իր համար որս ճարում։

Ին ի՞նչն է՝

Թռեր ունի, փետուր չունի,

Բայց թռչում է, ինչպէս թռչուն.

Կտուց չունի թռչնի պէս,

Բերան ունի մկի պէս։

## Պատիկն ու լիստիկը

Դաշտի մուկը հսկայ ու չաղ,  
Ազին երկար, ինքը դօչաղ,  
Մօտենալով մի օր մի տան,  
Տեսաւ պստիկ վտիտ մըկան.  
«Պահ, քո տունը Աստւած շինի,  
Էղակս պստիկ մուկ կը լինի...  
Էղքան նիհար, հալից ընկած  
Աշխարհումս դեռ չի եղած:  
Հարուստ տան մէջ տաք ամբարում  
Թագաւորի կեանք ես վարում.  
Ուտում ես միշտ կարագ ու եղ,  
Կրծում շաքար ու նուշ համեղ:  
Իսկ ես խոպան, ցուրտ դաշտերում  
Հազիւհազ եմ ապրուստ ճարում.  
Բայց տես, ըեզնից մեծ եմ, հսկայ,  
Ինձ պէս լիստիկ՝ էլ մուկ չկայ...»—  
«Մի պարծենար, իմ աչքի լիս,  
Մէկ նայիր, թէ ով է գալիս»:  
Նայեց էն կողմ դաշտի մուկը  
Տեսաւ կատւին—ցամքեց թուքը:  
Պստիկ մուկը իսկոյն փախաւ,  
Իր նեղ բնում շուտ թագ կացաւ.  
Շատ աշխատեց լիստիկ մուկն էլ,  
Բայց չկարաց ծակը մտնել:  
Կատուն վազեց կաղիկ-կաղիկ,  
Բոնեց դաշտի մըկան չաղիկ:  
«Բաջի, կանչեց տան մըկնիկը.  
Պստիկն է լաւ, թէ լիստիկը...»

## Համառու բացատրութիւն գործադրողներին

I. Արդէն էքսպէրիմէնտալ մանկավարժութիւնը բազմաթիւ փորձերով ապացուցել է, որ ձեռագրից արտագրելը երկու անգամ պակաս սխալներ է տալիս, քան տպագրից արտագրելը։ Նոյնպէս ապացուցւած է, որ ձեռագրով գրել-կարդալ սովորեցնելը անհամեմատ աւելի արագ և յաջող արդիւնք է տալիս, քան տպագրով։ Այստեղ մանուկը իր բնական հակումների համաձայն նախ գրում, ապա գրածը կարգում է։ Այսպէս մանուկը գործ ունենալով միմիայն մի բանի (ձեռագրի) հետ, աւելի շուտ ըմբռնում է, հեշտութեամբ վարժում, առաջ է զնում, քան երբ նրան ձեռագրի հետ միասին տալիս են տպագրերը։ Զեռագիրը որչափ էլ նման լինի տպագրին, այնուամենայնիւ չի կարելի միացած տանել, որովհետև մանկանը դժւարութիւն է պատճառում. իսկ երբ սրա հետ միացած են տանում ձեռագիր և տպագիր գլխատառերը՝ խնդիրն անհամեմատ աւելի ու աւելի բարգանում է։ Իւրաքանչիւր գիտող դասատու բազմաթիւ փերձերով կարող է տեսնել, որ մանուկները գրելիս շատ անգամ մեծ ու փոքր տառերը շփոթում են միմեանց հետ և գրել-կարդալու գործը դանդաղեցնում, դժւարացնում են։ Տպագիր և ձեռագիր փոքր ու մեծ տառերը իրար հետ անցնելիս՝ մանուկների ուշադրութիւնը ցըւում է, նրանք չեն կարող կենդրոնանալ ոչ մէկի վրայ և դրա համար թէ գրելը, թէ ուղղագրութիւնը և թէ կարդալը տուժում է։ Այն ինչ երբ նրանք սկզբում միայն ձեռագրի հետ գործ ունենան, այն ժամանակ մի բանով զբաղեցնելով, ամբողջ ուշադրութիւնը կենդրոնացնում են ձեռագրի գրել-կարդալու վրայ, դրանով մանուկները ոչ միայն լաւ գրելու վարժութիւն են ձեռք բերում, այլև գրածն արագ ըմբռնելու և կարդալու։

Այս հիման վրայ մեր դասագրքով մանուկները պէտք է գրելով կարդալ սովորեն և ձեռագիր տառերի վարժութիւնները վերջացնելուց յետոյ, նոր անցնեն տպագիրը և սրանից յետոյ էլ զլիսագրերը։ Աւելորդ ենք համարում սրա վրայ երկար կանգնել, քանի որ էքսպէրիմէնտալ մանկավարժութիւնը բազմաթիւ փորձերով այդ ցոյց է տւել։

II. Վերոյիշեալ բացատրութեան հիման վրայ՝ մեր ձերագիր տառերը սովորական ընդունւած ձեից տարբերում են. ա) մեր ընդունած ձեռագիր տառերը տպագրին շատ նման են, որպէս զի տպագրեն անցնելիս ոչ մի դժւարութիւն առաջ չգայ. միայն մի քանի ձեռագրեր (ձ, հ, ճ, ք) տպագրից տարբերում են, որոնց վարժութիւններին մենք շատ տեղ ենք տւել. բ) արդէն բնախօսական էքսպէրիմէնտները ցոյց են տւել, որ երբ տառերը մազագծերով իրար հետ միացնում են, մանկական լաւ չկազմակերպւած և թոյլ մկանունքները բաւական արագ յոդնում են. այն ինչ վայրկենական ընդհատումները որոշ հանդստութիւն տալով՝ յոդնածութիւն չեն առաջացնում: Միւս կողմից մազականներով վերջացած և կից գրութիւնը՝ մանուկների դեռ անվարժ աչքի համար միանդամից ընդգրկելը և ըմբռնելը բաւական դժւար է: Փորձերը ցոյց են տւել, որ նոյն դժւարութիւններին են հանդիպում նաև հասակաւոր անգրագէտները: Այս հիման վրայ մենք խուսափել ենք տառերը մազագծերով վերջացնել և կից գրել: Մեր ընդունած գրութեան ձեզ մանուկների տեսողութեան համար շատ պարզ է, միանդամից ըմբռնելի և կարդալու համար հեշտ: գ) Մեր տառերի ձեն ապագայ գեղեցիկ և արագ գրութեան պարզ ձեն է: Այս գրութիւնով առաջնորդողները յետագայում կարիք չեն ունենայ ոչ մի մազագիծ դուրս ձգելու, ինչպէս այդ տեղի է ունենում, երբ տառերը մազագծերով են վերջանում: Երբ մանուկների ձեռքերը գրութեան մէջ վարժուում են, երբ նրանք մտաւորապէս աւելի տոկուն են դառնում, այն ժամանակ նոր պէտք է անցնեն կից և արագ գրութեան, իսկ այսպիսի դէպքում, մեր գրութիւնով առաջնորդուղները աւելացնելու են միայն մազագծերը:

III. Ձեռագիր և տպագիր փոքր ու մեծ տառերը սովորեցնելիս աշխատել ենք. պարզից բարդը, հեշտից դժւարն անցնել: Մրանով տառերի մասերը մէկը միւսին հիմք են ծառայել և գործը հեշտացըել: Երբեմն այդ սկզբունքից շեղել ենք բովանդակութեան կազմը ինկատի ունենալով. մի բան՝ որ տառերի կապակցութեան և հեշտ սովորելուն պակաս չի նպաստում: Դարձեալ հեշտութեան համար փոքրելուն պակաս չի նպաստում: Դարձեալ հեշտութեան համար փոքրել ենք, իսկ մեծատառերի անցնելը շատ թեթևացըել: Այս ձեռվ մանուկները մեծատառեր կը գրեն այն ժամանակ, երբ արդէն փոք-

րատառերը անցած են, որոնց շնորհիւ թէ նրանց աչքը և թէ ձեռքը վարժուած են:

IV. Մանկագիտութիւնը (педологիա) դրականապէս ապացուցել է, որ մանուկները նկարել սիրում են և իւրաքանչիւրն աշխատում է իր երևակայած իրը կամ կենդանին նկարել: Այս պատճառով՝ որպէս ծեռքի վարժութեան և զրութեան նախապատրաստովիլ՝ ընտրել ենք պարզ գծերից կազմած շրջապատ առարկաների նկարներ: Մանուկները ուսուցչի առաջարկութեամբ պէտք է դրանք գործից կամ դասարանի գրատախտակից իրենց տեսրակների վրայ արտանկարեն (տես I աստիճան): Նպատակայարմար է միանդամից գրչով մի գծանի տեսրակի վրայ նկարել, քան մատիտով մի քանի գծի կամ քառակուսիների վրայ:

Փորձերը ցոյց են տւել, որ 4, 3 կամ 2 գիծը ոչ միայն գըութեանը գիւրութիւն չեն պատճառում (ինչպէս կարծում են), այլ այդ գծերի մէջ տառերի տեղը որոշելը բաւական դժւարութիւն է առաջ բերում: Այդ գծերը մանուկների աչքերին և ձեռքերին ենթադրած համաշափութիւնը նոյնպէս չեն տալիս և նրանց ինքնուրոյն աշխատանքը կաշկանդում, կապում են: Այսպէս, երբ մանուկները 4 գծից անցնում են մէկին, նրանք աւելի դժւարութիւնների են պատահում, քան միանդամից մի գծի վրայ գրելիս: Մի գիծը տառերին ուղղութիւն է տալիս, իսկ նրանց համաշափութիւնը մանուկներն իրենք են կամաց կամաց ձեռք բերում և վարժուում: Այս ծերը առանց գծի ուղիղ եւ համաչափ գրութեանը հասնելու ամենակարծ եւ որական ժանապարհն է:

Գրութեան ձեզ ուղղահայեաց ենք վերցրել ինկատի ունենալով հետեւալը. ա) մանուկները ինքնուրոյն գրելիս աւելի ուղղահայեաց են գրում, քան թեք իւրաքանչիւր դիտող սրանում կարող է փորձով համոզւել. բ) թեք գրութիւնն առողջապահական տեսակէտով վնասակար է, որովհետեւ նա պատճառում է ողնաշարի ծուռթիւն, կրծքի, ստամոքսի ճնշումն և այլն: Այս բաներն արդէն զպրոցական առողջապահութիւնն ու բնախօսութիւնը հաստատել են, այն ինչ ուղղահայեաց գրութիւնն այդ պակասութիւններից ազատ է. գ) ընդունելով ուղղահայեաց գրութիւն, դասատրուները պէտք է ի նկատի ունենան մանուկների բնական առանձնայատկութիւնները. ոչ մի գէպում չպէտք է ճնշեն նրանց ինքնուրոյն գրութեան ձեզ, որը կարող է ընդունւածից թեթև շեղումներ ներկայացնել:

V. Ի՞նչպէս սկսել մեր դասագրքով պարապել: Առաջին օրերում պէտք է կարճ խօսակցութիւն ունենալ դասարանի և առարկաների մասին, ապա զբուցատրութեան նիւթ դարձնել մեր դասագրքի «Զանկլօ-Պանկլօ», «Պոչատ կաչաղակ» հէքեաթները, աշնան յօդւածներից «Երեք թիթեռնիկ», «Մարեակի դանդար»), «Մանուկներն անտառում» \*):

Որպէս զի դասերը միակողմանի և ձանձրալի չլինեն և միաժամանակ մանուկները զբութեան մէջ վարժւեն, պէտք է իւրաքանչիւր դասում երկու տեսակ զբաղմունք լինի. մի մասը բանաւոր, միւսը գրաւոր: Այս կերպ որոշ ժամանակ պատմութիւններ և զբաւոր վարժութիւններ անցնելուց յետոյ՝ պատմութիւնների տեղ՝ այժմ դասերի մի մասը տրւելու է վերլուծական և համազրական վարժութիւններին, այսինքն իրենց անցած հէքեաթները, պատմութիւնները կամ ոտանաւորները վերլուծել խօսքերի (նախադասութիւնների), բառերի, վանկերի (կտոր) և հնչիւնների (երկար և կարճ ձայների). ապա հնչիւնները համազրելով, կազմել վանկեր, բառեր և խօսքեր. իսկ դասերի միւս մասը նվիրել գրաւոր վարժութիւնների շարունակութեանը: Այսպէս ուրեմն բանաւոր նախապատրաստութեան հետ գուգընթացաբար առաջ է գնում զբաւորը և բանաւորների հետ միասին կըվերջանան զբաւոր նախավարժութիւնները՝ տառերի հիմնական էլէմէնտների հետ: Այդ էլէմէնտներով կարելի է բոլոր տառերը կազմել:

VI. Այս բոլորից յետոյ բանալ գրքի Յ-րդ երեսը. այստեղ գուշաւոր նկարւած է մի սենեակ, նրա մէջ կայ բազմոց, սեղան, վառարան, փնջով ծաղիկ, ժամացոյց, պատկեր և այլն: Մանուկներն ընտանիքի անդամներին անուններ են տալիս. դրա համար ուսուցչի հարցերին պէտք է պատասխանեն, որ մայլիկը հաց է կտրում, Արփիկը նստած զրում է, իսահակը կարմիր ծովն ծեռքին ուրախ կանգնած է, էմինը նստած ընկոյզ է կոտորում. տատը կարում է, պապը թոռնիկը հետ խաղում է, պատից կախած է ժամացոյց, պատկեր. պատկերի վրայ նկարած է սար, աստիճանակի վրայ կայ մի փունջ

\*) Աշնան յօդւածները պատմելիս անհրաժեշտ է աշնան մասին շօշափելի գաղափարներ տալ. դրա համար պէտք է մանուկներին դասարանից դուրս տանել և ամեն ինչ գործնականապէս ցոյց տալ: Սրանով նրանք աշնան մասին զննողական պարզ գաղափար կունենան և աշնան յօդւածներն անցնելիս նրանց վրայ երկար կանգնելու առանձին կարիք չի լինի:

ծաղիկ, յատակը ներկած է ղեղին. ցերեկէ, հայրը տանը չէ:

Այս ամենը մանուկները պէտք է պատկերին նայելով լաւ պատմել իմանան, որովհետեւ սրանցից էլ օրինակելի նախադասութիւններ (խօսք) և բառեր են ընտրւած:

VII Ամեն կերպ աշխատել ենք խուսափել օրինակելի բառերի համար ընտրել զանազան կենդանիների, զործիքների և այլ առարկաների անուններ: Սրանցից շատերը մանուկներին կամ անծանօթ են և բացատրութիւնների կարու և կամ առարկաների անունները դաւառաբառառներում տարբեր լինելու պատճառով՝ նորութիւն են ներկայանում. իսկ անծանօթ կամ նոր սովորած բառի հետ կապե մի նոր տառ՝ դա շատ գժւար կըլինի: Այստեղ մանուկները երկու գժւար զործ պէտք է կատարեն. նախ, անծանօթ բառի նշանակութիւնը պէտք է հասկանան, յիշողութեան մէջ պահեն և ապա սրա հետ պէտք է մի նոր տառ կապեն. իսկ եթէ օրինակելի իրը ծանօթ է, պէտք է աշխատեն դրա զբական լեզով զործածւող նոր անունը միտքը պահել և դրա հետ կապել նոր սովորելիք տառը: Երկու զէպշումն էլ մանկան ուղեղի համար ծանրաբեռնութիւն է առաջ գալիս. որովհետեւ բազմաթիւ անծանօթ բառեր, առարկաներ և տառեր նրա յիշողութեան մէջ կուտակելով, բնականաբար նա պէտք է ձանձլաբանայ, թուլանայ և նրա յիշողութիւնից դրանցից շատերը նսեմանան և մոացւեն: Այսպիսի երկոյթների առաջն առնելու համար մնում է կրկնել միշտ կրկնել, որ նրանք յիշեն. սրանով էլ շատ անզամ մանուկները անգիր են անում, առանց տառը լաւ ճանաչելու և իրը հասկանալու. Ուրիշ պատճառների հետ միասին պէտք է նաև սրան վերագրել այն երկոյթը, որ բոլոր այբուբենը անցնելուց յետոյ շատերը այս կամ այն տառը մոռացած են լինում և կամ չեն կարողանում զրել:

Այս հիման վրայ մեր դասագրքում օրինակելի բառերի մեծ մասը մանկան սովորած ընդհանուր պատկերից է վեր առած. մի մասն էլ մանկան շատ ծանօտ շրջապատից. որոշ պատկերներ տարբեր ձևերով կրկնում են, որոնցից էլ օրինակելի բառեր են դուրս բերում. այսպէս ուրեմն կապակցաբար առաջ զնալով թէ անցած տառերն են վերանորոգւում և թէ նորերն աւելի լաւ են կապւում ու տպաւորւում: Ուրեմն մեր դասագրքով նոր սովորելիք տառերը ոչ թէ հատ խօսքերի հետ են կապւած մնում, այլ իրանց ծանօթ իրերի և երկոյթների հետ:

\*\*) Ճանօթ. Պատկերների տակ տպւած նախադասութիւնները ուսուցչի համար են: Ուստի օրինակելի բառն անցնելուց առաջ դասատուն պէտք է

VIII. Սկզբնական վարժութիւնների մէջ խուսափել ենք այն բառերից, որոնց մէջ երկու կամ աւել բաղաձայներ միասին կան. որպէսզի բառերը հեշտ կարդացւեն և «ը» տառի գործածութիւնը բաղաձայների մէջ շուտ առաջ չգայ, «ը» տառով վանկելը յետացրած է մինչև V. աստիճանը, երբ մանուկներն արդէն բաւական վարժած են կարդալու մէջ: Եթէ նախապատրաստական վարժութիւնները լաւ են տարւած, այն ժամանակ բառերի մէջ լուսող «ը» տառի հետ հեշտ կը լինի գործ ունենալ:

Վերջին ժամանակներում էքսպէրիմէնտալ մանկավարժութիւնը նորից դրական կերպով ցոյց տւեց, որ մանուկներին սկզբում գրել-կարդալ սովորեցնելու բնական և ուղիղ ճանապարհն է վերլուծական և համադրական մեթոդների միաւորութիւնը և ոչ թէ առանց դրան՝ միանգամից կարդալուն անցնել: Դրա համար մենք այդ ուղղութիւնը ոչ միայն բանաւոր նախապատրաստական վարժութիւնների մէջ ընդունել ենք, այլ և այդ գործադրել ենք մինչև VI. աստիճանը: Արանով յետագայ բազմավանկ բառերի գրել-կարդալը դիւրանում է և մանուկը ինքնուրոյն կերպով հնարաւորութիւն կունենայ դժւարացած դէպքերում բառերը վերլուծել, համադրել և կարդալ: Այս կերպ կարդացած իւրաքանչիւր բառ կամ նախադասութիւն պէտք է բառ առ բառ կարդալ, ապա նոյնը վարժ և առողանութեամբ:

Այբունարանի և ընթերցարանի մէջ նպատակով խուսափել ենք առածներից և դա էլ նրա համար, որովհետև շատ առածների բացատրութիւնները բարդ է Ա. տարւայ մանուկների համար. միւս կողմից շատ անգամ մի գաւառի առածները միւսի համար անհասկանալի են: Առածներ գործածելը այս տարում թողնուում է ուսուցչին, որ յարմարաւոր դէպքում օգտուի տեղական պարզ առածներից:

Օրինակելի տառերը դուրս ենք բերել բառերի առաջին տառից և միայն մի երկու դէպքում վերջից: Մեր համոզմունքն է և փորձերն էլ այդ են ցոյց տւել, որ առաջին տառն ամենից շուտ լուսում է, ամենից ալարզ ականջին զարկում, հետևապէս ամենից արագ ըմբռնելի է՝ քան վերջին, մանաւանդ բառերի միջից դուրս բերած տառերը: Վերջին դէպքում ոչ միայն պարզութիւնը կորչում է, այլ

խօսակցութեան նիւթ գարձնէ պատկերը և դրանից երեխաները պիտի դուրքերն պատկերի էութիւնն արտայայտող նախադասութիւնը. այնուհետև մասնուկների ուշադրութիւնը պէտք է հրաւիրէ օրինակելի բառի վրայ, որի օգնութեամբ սովորելու են նոր տառը:

և այդ տառի հաջիւնը հասկացնելու համար պէտք է կամ բաւական դժւարութիւնների մէջ ընկնել և կերլուծելով հասկացնել և կամ մանուկավարժական միջոցները թողած՝ միանգամից տառի անունն ասել, այնպէս որ օրինակելի բառը միայն ձեի համար դրւած կը լինի: Այս տեղ ուսուցիչը իր միջոցներով է ճանապարհ բաց անում և ոչ թէ դասագիրքն է այդ տալիս:

IX. Ուսուցիչներին և աշակերտներին դիւրութիւն տալու համար իւրաքանչիւր գասում մի տառ է նշանակւած և բոլոր անցուծ տառերը իւրաքանչիւր գասի մէջ կը կնւում են:

Փոքր իշատէ փորձւած դասատուն չի կարող չվկայել, որ մի ժամում մի տառից աւելի անկարելի է անցնել, նամանաւանդ սկզբնական շըջանում: Մանուկները պէտք է այդ տառն ըմբռնեն, գրեն, վարժութիւնների մէջ գործադրեն և իւրացնեն, դրա համար էլ դըժւար է մի տառից աւել անցնել: Մի ժամում մի քանի տառ անցնելը ոչ միայն տանջանք է մանկան համար, այլև նա անկարող է յիշողութեան մէջ պահել. ուսուցիչն ստիպւած կը կին ու կը կին պէտք է դիմէ անցած վարժութիւններին: Այս ամենը մենք անձնական փորձերից տեսել ենք, դրա համար էլ իւրասակել ենք այդպիսի դժւարութիւններից և մեր կարծիքով հեշտացրած և մանկավարժական պահանջների համաձայն դասագիրք ենք առաջարկում: Թէ որչափ ենք հասել մեր ցանկացած նպատակին, այդ բարեխիղդ գործադրողների փորձերն ու կարծիքները ցոյց կը տան. որոնց նկատողութիւնները սիրով և շնորհակալութեամբ կը նույնացնենք:

Մի երկու խօսք ևս, թէ մեր գասագրքի իւրաքանչիւր մասինքանի ժամ պէտք է նւիրել: Հիմնելով մեր փորձերի վրայ, կասենք. մօտ 20 ժամ պէտք է տալ նախապատրաստական վարժութիւններին (զրուցատրութիւն, վերլուծութիւն և գրութիւն): Բ) իւրաքանչիւր դասում մի տառ անցնելով, 40 վարժութիւններին պէտք է տալ 40 ժամ, իսկ նրանց վերաբերեալ յօդւածներին 15 և 5 դաս մանրատառապարին, ընդամենը 80 դաս: Ներկայ ծրագրի համաձայն շաբաթական 7 ժամ հաշւելով, մինչեւ նոյեմբերի վերջը կանցնեն ըոլոր կան ծանուազիր եւ տպագիր տառերը իրենց վարժութիւններով. Այսպէս աշնան վերջին մանուկները վերջացրած կը լինեն ոչ միայն բոլոր տառերը, այլև աշնան մասին զննողական գաղափար կունենան և նրան պատկերի էութիւնն արտայայտող նախադասութիւնը. այնուհետև մասնուկների ուշադրութիւնը պէտք է հրաւիրէ օրինակելի բառի վրայ, որի օգնութեամբ սովորելու են նոր տառը:

վեր առած մի քանի յօդւածների ընթերցանութեան։ Յունւարից զննական կերպով պիտի սկսել ձմռան յօդւածները, գարնանը՝ գարնան յօդւածները, իսկ վերջերում գաղափար տալ ամառայ մասին։

## Ա.ՍԻ ՃԱՆԵՐ

I

(Երես 2)

Պ. սիւնեակ. Ուղղահայեացու հորիզոնական գծեր եւնրանց միաւորումը

Այս սիւնեակում (ինչպէս և հետեւեալներում) պատահող ձևերը նախ պէտք է գործնական կերպով հասկանալի դարձնել երեխաներին և ապա նկարել տալ, առաջարկելով. —

Բանեցէք ձեր քանոնները, մատիտները, գրչակոթերը ուղղահայեաց։

Ցոյց տւէք դասարանի մէջ ուղղահայեաց գծեր (սեղանի, լուսամուտի, պատի վրայ և այլն):

Նկարեցէք ուղղահայեաց գծեր։

Բանեցէք ձեր մատիտները, գրչակոթերը, մատները հորիզոնական. ցոյց տւէք դասարանի մէջ նոյն տեսակ գծեր։

Նկարեցէք հորիզոնական գծեր, խաչ, գրատախտակ, լուսամուտ, նստարան, սեղան, կանգնած ու պառկած սանդուղք և պատ։

Բ. սիւնեակ. Թեր զծեր

Բանեցէք ձեր մատիտները, քանոնները, գրչակոթերը թեք։

Նկարեցէք թեք գծեր՝ աջից դէպի ձախ, ձախից դէպի աջ՝ խաչ, աթոռ, աստղ, ծառ, ծաղկաման, նամակ, տնակ, քանոն։

Գ. սիւնեակ. Կոր զծեր

Նկարեցէք օղակ, տնիւ, կեռաս, խճոր և կանգնեցրած ձու։

Դ. սիւնեակ. Տառերի հիմնական զծերը

Նկարեցէք կարթ՝ միսը վրան, միայն կարթ՝ փոքր ու մեծ, երկու գլխանի կարթ։

Միացրէք մի կարթը մէկ ուղղահայեացի հետ ուղղահայեացը՝ վերևից կարթ ունեցող գծին։

» մի կարթ ուղղահայեաց գծի և վերևից կարթ ունեցող մէկ ուրիշ գծի հետ։

Նկարեցէք մի ուղղահայեաց և ներքելից սրան միացող մէկ հորիզոնական գիծ։

» միհնոյնը աւելի մեծ։

» ուղղահայեաց գիծ՝ ներքել ձւած։

» ձեռափայտ։

II

Զբացատրութեան նիւթ է դառնալու Յ-րդ երեսում եղած ընդհանուր պատկերը այն ձևով, ինչ ձևով. վերևում նկարագրւեց։

III

Մէկ և երկու վանկանի բառեր գրել-կարդալ

IV

Երկու և երեք վանկանի բառեր գրել-կարդալ

V

Երկու բաղաձայնը վանկել «Ը» տառով՝ առանց «Ը»-ն գրելու

VI

Բաղմականկ բառեր և վանկերի չբաժանւած յօդւածներ

**Տպագիր փոքրատառեր****Զեռագիր և տպագիր մեծատառեր****Հնդհանուր յօդւածներ**

«վ» և «ւ» (տես երես 8) իբրև նման հնչիւններ պիտի անցնել միատեղ և ասել մեծ «վ» և փոքր «ւ». սրանց տարբեր գործածութիւնը երեխանները պիտի սովորեն վարժութիւններով:

«յ»-ն բառերի վերջում (տես երես 30) չկարդալու համար առանձին ուշադրութիւն պիտի դարձնէ դասատուն և ըմբռնել տայ դարձեալ վարժութիւններով:

Դասագրքի մէջ մտցրել ենք մի քանի օտարազգի բառեր, որոնք կամ շատ ընդհանրացած են և կամ յատուկ են մանկական լեզւին:

**ՑԱՆԿ****Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն**

Գրութեան նախավարժութիւն	2
Բնդհանուր պատկեր (գունաւոր)	3
1. Վարսիկի կատուն	11
2. Արև, արև. ոտանաւոր ժողովրդ. (Ք. Հակ.)	12
3. Օրօր. ոտանաւոր	13
4. Սրտոտ գորտը («Ծաղիկ» մանկ.թ.)	14
5. Դանդան մանկիկ. ոտան. ժողովրդ. (Ազգ. Հ.)	15
6. Իմաստուն կովը. փոխադր.	15
7. Թօն արաւ. ոտան. ժողովրդ.	16
8. Յոլակի ակնոցը. փոխադր.	17
9. Ես ունեմ. ոտան. նմանողութիւն	18
10. Կատուն և սերը. փոխադր.	21
11. Մէկը գալիս է մօլի մօտ. ժողովրդ.	23
12. Հորոսի մանգաղը. ժողովրդ. (Հորոսից)	24
13. Աքլոր. ոտանաւոր. ժողովրդ. (Ազգ. Հ.)	25
14. Ծիակի եմ. ժողովրդ.	26
15. Ծոյլ թկանը. ժողովրդ.	27
16. Արջը և Ժօրժիկը. փոխադր.	27
17. Կոռւնկներ. ոտան ժողովրդ.	28
18. Բարի լոյս, Գարօ. ժողովրդ	29
19. Փիսիկ. ոտանաւոր. ժողովրդ. (Ազգ. Հ.)	29
20. Ստլիկ Յակոբը. ժողովրդ.	30
21. Երկու ձի. փոխադր.	31
22. Կու-կու-լի-կու. ոտան. Աթ. Խնկոյեան	33
23. Վարդանը և Ռոկանը փոխադր.	34
24. Բգէզ. Աթ. Խնկոյեան	35

25.	Բօբը. փոխադր. . . . .	35
26.	Մատների վէճը. ոտան. (ժողովրդ.) . . . .	36
27.	Պստիկ հէքեաթ. ոտանաւոր ժողովրդական . . . .	37

Հ Ն Թ Ե Բ Յ Ա Բ Ա Ն

Ա.

(Շրջապատ)

1.	Գիրք. ոտան. Աթ. Խնկոյեան. . . . .	38
2.	Ռուզանը. փոխադր. . . . .	39
3.	Արտուտիկ. (Ճեռագիր) ոտան. Հ. Հայրապետեան. . . . .	40
4.	Կլորիկ. թմբլիկ. ոտանաւոր. («Ծաղիկ» մ. թ.). . . . .	40
5.	Բկլիկ Պետիկը . . . . .	41
6.	Մատների խաղը. ժողովրդ. . . . .	42
7.	Նոյեմբեր. ոտանաւոր. (Ճեռագիր) Հ. Հայրապետեան . . . . .	43
8.	Ծոյլ Խաչիկը. . . . .	44
9.	Նազիկ տատի խաղը. . . . .	45
10.	Զիկ, չիկ, ոտան. Աթ. Խնկոյեան . . . . .	45

Բ.

11.	Աշուն . . . . .	46
	Գունաւոր պատկեր աշնան համար . . . . .	"
12.	Աշուն ոտան. Պետ. Մոճոռեան. . . . .	47
13.	Լուսին, լուսին. ոտան. Աթ. Խնկոյեան. . . . .	48
14.	Սարեակ. փոխադր. . . . .	48
15.	Կըտ-կըտ կըտկըտան. Աթ. Խնկոյեան . . . . .	49
16.	Լաւ ընկեր. ոտան (Ճեռագիր). Հ. Հայրապետեան . . . . .	50
17.	Երեք թիթեռնիկ . . . . .	51
18.	Խատուտիկ. ոտանաւոր. Ա. Գիւլզադ. . . . .	53
19.	Երեխաներն անտառում. նմանողութիւն . . . . .	53

Գ.

20.	Զմեռ . . . . .	57
	Գունաւոր պատկեր ձմեռուայ համար . . . . .	"
21.	Նոր տարի. ոտան. Գ. Թ. . . . .	58
22.	Զին և ձնձղուկը. ոտանաւոր . . . . .	59
23.	Զմեռուայ գալը. ոտան. . . . .	59
24.	Զմեռուայ զւարձութիւն . . . . .	60

25.	Զնէ մարդ. ոտան. նմանողութիւն . . . . .	62
26.	Աշնան տերեւ (Ճեռագիր) ոտան. Հ. Հայրապետեան . . . . .	63
27.	Պոչատ կաչաղակը. ժողովրդ. (Վան. Սազ.) . . . . .	63

Դ.

28.	Գարուն. . . . .	66
	Գունաւոր պատկեր գարնան համար . . . . .	"
29.	Գարուն ոտան. Պետ. Մոճոռեան . . . . .	67
30.	Բալենու հիւրերը . . . . .	67
31.	Սագ. ոտան. նմանողութիւն . . . . .	68
32.	Գարտէզում. նմանողութիւն . . . . .	69
33.	Ծիտիկ. ոտան. փոխադր . . . . .	70
34.	Անտառում . . . . .	71
35.	Մայիսին. ոտան. Եր. Բաբայեան . . . . .	72
36.	Արտուտի բունը . . . . .	73
37.	Արտուտի երգը. Աթ. Խնկոյեան . . . . .	74
38.	Ծիծեռնակի բունը. փոխադր. . . . .	74
39.	Ծիծեռնակ. ոտան. Դոդոխեան . . . . .	75
40.	Զանկօ, Պանկօ. ժողովրդ. մի մասը Ճեռագ. (Հայկ. կենդ. վէպեր) . . . . .	75
41.	Կի-կի-լի-կի... աքլորն եմ. Աթ. Խնկոյեան . . . . .	79

Ե.

42.	Ամառ. . . . .	82
	Գունաւոր պատկեր ամառուան համար . . . . .	"
43.	Ամառ. ոտան. Մ. Մամիկոնեան (մի մասը Ճեռագիր) . . . . .	82
44.	Զմբուխտ եզնակ. Յար. Թումանեան . . . . .	83
45.	Արագիկի սէրը. փոխադր. . . . .	83
46.	Զղջիկ. ժողովրդ. (Հայկունի, կենդանական վէպեր) . . . . .	84
47.	Պստիկն ու լիստիկը. Յար. Թումանեան . . . . .	86

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Բ

1.	(Ուլիկ ուլիկ)	նուռ	7
2.	. . . . .	գիրք	42
3.	. . . . .	մոմ	43
4.	. . . . .	չոջիկ	85

Համառօտ բացատրութիւն գործադրողներին. . . . .

100 OF 300

100  
100  
100

100  
100  
100

100  
100  
100

100  
100  
100

ԳԻՆՆ է 40 ԿՈՊ.

Գ Ա Ս Ա Լ Կ Ե Բ

Առաջին տարի	40 կ.
երկրորդ տարի	50 կ.
երրորդ տարի	60 կ

---

Պահեստը Գուտտենբերգ գրախանութում (Թիֆլիս)  
Գումարով առնողներին 20 % զեղչ

Յանկացողները դիմեն՝

Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“.

ՀՀ Ազգային գրադարան



NL1643194

919